ՏԵՂԵԿԱՆՔ

2012 Թ-ԻՆ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐՈՒՄ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ

ՎԱՆԱՁՈՐ

2012

Ըստ ՀՔԱ Վանաձորի գրասենյակի ուսումնասիրության արդյունքների 2012 թվականի հունվարի 1-ից մինչև հունիսի 20-ը ընկած ժամանակահատվածում ՀՀ զինված ուժերում գրանցվել է 23 միջադեպ, որի հետեւանքով մահացել է 27 զինծառայող: 23 միջադեպերից միայն 12-ի դեպքում է ՀՀ պաշտպանության նախարարությունը հանդիսացել տեղեկատվության տարածման առաջնային աղբյուր:

Նշված ժամանակահատվածում գրանցված մահացության 27 դեպքերից 10-ը հրադադարի ռեժիմի խախտման հետեւանքով է, 5-ը ինքնասպանության կամ ինքնասպանության հասցնելու հետեւանքով, 1-ը՝ զենքի հետ վարվելու կանոնների խախտման, 4-ը՝ դժբախտ պատահարի, 3-ը՝ առողջական խնդրների եւ ոչ պատշաճ բժշկական ծառայության տրամադրման պատճառով, 3-ը՝ սպանության հետեւանքով եւ 1-ը՝ ծառայության նկատմամբ անփույթ վերաբերմունք ցուցաբերելու պատճառով:

Դեպքերից երկուսի ժամանակ զոհվել են միանգամից երեքական զինծառայողներ՝ երեքը զոհվել են Այգեպար-Մովսես ճանապարհին ադրբեջանական զինուժի կողմից մարդատար ավտոմեքենայի գնդակոծման հետեւանքով, իսկ մյուս երեքը՝ ադրբեջանական զորքերի կողմից ՀՀ Տավուշի մարզի Բերդավան և Չինարի գյուղերի ուղղությամբ տեղակայված հայկական հենակետեր ներթափանցելու փորձի ժամանակ:

Դեպքերից 6-ի առնչությամբ հարուցվել է քրեական գործ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 104 հոդվածի 1-ին մասի հատկանիշներով՝ սպանություն, 4-ի առնչությամբ ՀՀ քրեական օրենսգրքի 104 հոդվածի 2–րդ մասի 1-ին և 6-րդ կետերի հատկանիշներով՝ սպանություն՝ երկու կամ ավելի անձանց, շատերի կյանքի համար վտանգավոր եղանակով, 1-ի առնչությամբ ՀՀ քրեական օրենսգրքի 104 հոդվածի 2–րդ մասի 1-ին, 6-րդ եւ 7-րդ կետերի հատկանիշներով, 1-ի առնչությամբ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 34-104 հոդվածի 2-րդ մասի 1-ին, 6-րդ եւ 13-րդ կետերով (սպանության փորձ 2 կամ ավելի անձանց, շատերի կյանքի համար վտանգավոր եղանակով. ազգային, ռասսայական կամ կրոնական ատելության կամ կրոնական մոլեգարության շարժառիթով) եւ 104-րդ հոդվածի 2-րդ մասի, 1-ին, 6-րդ եւ 13-րդ կետերով (սպանություն՝ շատերի կյանքի համար վտանգավոր եղանակով, ազգային, ռասսայական կամ կրոնական ատելության

կամ կրոնական մոլեգարության շարժառիթով): 5 դեպքի առնչությամբ հարուցվել է քրեական գործ ՀՀ քրեական օրենսգրքի 110 հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործության հատկանիշներով (ինքնասպանության հասցնելը), 1 դեպքի առնչությամբ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 373 հոդվածի 3-րդ մասով նախատեսված հանցագործության հատկանիշներով (զենքի հետ վարվելու կանոնների խախտում, ինչն անզգուշությամբ առաջացրել է մահ, 1 դեպքի առնչությամբ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 376 հոդվածի 2 մասով՝ պաշտոնական անձի անփույթ վերաբերմունք ծառայության նկատմամբ, որն անզգուշությամբ առաջացրել է մահ, 2 դեպքի առնչությամբ ՀՀ քրեական օրենսգրքի 242 հոդվածի 2-րդ մաս՝ Ճանապարհային երթևեկության և տրանսպորտային միջոցների շահագործման կանոնները խախտելը, որն անզգուշությամբ առաջացրել է մարդու մահ, 1 դեպքի առնչությամբ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 377 հոդվածի 2-րդ մասով՝ մեքենաներ վարելու կամ շահագործելու կանոնները խախտելը եւ 1 դեպքի առնչությամբ ՀՀ քրեական օրենսգրքի 376-րդ հոդվածի հատկանիշներով՝ անփույթ վերաբերմունքը ծառայության նկատմամբ: Երեք դեպքի առնչությամբ նշված չեն, թի ինչ հոդվածներով են հարուցվել քրեական գործերը (մահվան երք դեպքից մեկը առողջական խնդիրների եւ ոչ պատշաճ բժշկական ծառայության տրամադրման հետ է կապված, իսկ մեկը՝ ավտովթարի հետուանքով դժբախտ պատահարի արդյունք է:

Հարկ է նշել, որ շատ դեպքերում քրեական գործերը հարուցվում են օրենքով սահմանված ժամկետներից ուշ:

Ինքնասպանության 4 դեպքերից 3-ի դեպքում դիակի վրա եղել են բռնության հետքեր, այրվածքներ (տե՛ս դեպքերի նկարագրությունը):

Գրանցված 3 սպանությունից երկուսը տեղի են ունեցել զինակիցների կողմից, որոնցից մեկը, ըստ նախնական պաշտոնական տվյալների նշվել է որպես հակառակորդի կողմից սպանություն, սակայն ավելի ուշ այդ վարկածը հերքվել է: Մեկ դեպքի առնչությամբ, ըստ ԶԼՄ-ներում տարածված տեղեկությունների ձերբակալվել է դասակի հրամանատարը, սակայն այն ավելի ուշ պաշտոնապես հերքվել է ՀՀ ՊՆ քննչական վարչության կողմից (տե՛ս դեպքերի նկարագրությունը):

Մահացության դեպքերից 14-ը տեղի է ունեցել Հայաստանի Հանրապետության տարածքում, 12-ը Լեռնային Ղարաբաղի տարածքում, իսկ տեղի ունեցած մեկ դեպքի վայրը նշված չէ: Համաձայն հասանելի տեղեկատվության՝ բոլոր դեպքերի առթիվ հարուցվել են քրեական գործեր, որոնցից 23 գտնվում է նախաքննության փուլում, 1 գործ՝ դատաքննության փուլում, մեկ քրեական գործ կասեցվել է, իսկ մյուս դեպքերի վերաբերյալ տվյալներ առկա չեն:

Ուսումնասիրության առաջնային աղբյուր են հանդիսացել ԶԼՄ-ները եւ զինծառայողների հարազատները:

Ստորեւ ներկայացվում է վիճակագրական տվյալները:

	Անուն ազգանուն	Դեպքի տարեթիվը	Դեպքի տարածաշրջան		Դեպքի վայրը (քաղաք, գյուղ)	Զորամասը	Տեղեկատվության տարածման առաջնային աղբյուրը	Քրեական գործ հարուցող մարմինը	Քրեական գործի պաշտոնական որակումը	Դեպքի պատճառը	Որ փուլում է գտնվում գործը
1.	Վահան Ասլիկյան	18.01.12	ՀՀ		Երեւան	Նուբարաշեն	Ոչ պաշտոնական	ՀՀ ՊՆ քննչական ծառայություն	ՀՀ Քր. Օր. 110 հոդվածի 1-ին մասի՝ ինքնասպանության հասցնելու հատկանիշներով	Պաշտոնական դիրքի չարաշահում(զինվոր-վերադաս հարաբերություններ /նախնական տվյալ/)	Նախաքննություն
2.	Փայլակ Շահնազարյան	27.01.12		ԼՂՀ		Ինտեռնատ 68617	Պաշտոնական	ՀՀ ՊՆ քննչական ծառայություն	ՀՀ Քր. Օր. 104 հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործության հատկանիշներով (սպանություն)	Զինվոր-զինվոր հարաբերություններ	Նախաքննություն
3.	Կառլեն Բաղդասարյան	02.02.12		ԼՂՀ	Հորադիզ	Հորադիզ, հակամարտ շփման գիծ	Ոչ պաշտոնական	ՀՀ ՊՆ քննչական ծառայություն	ՀՀ Քր. Օր. 110 հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործության հատկանիշներով (ինքնասպանության հասցնելը)	Զինվոր-զինվոր հարաբերություններ	Նախաքննություն
4.	Մարատ Դիմակսյան	05.02.12		ԼՂՀ	Հադրութ	Հադրութի հակամարտ շփման գիծ	Պաշտոնական	ՀՀ ՊՆ քննչական ծառայություն	ՀՀ Քր. Օր. 373 հոդվածի 3-րդ մասով նախատեսված հանցագործության հատկանիշներով (զենքի հետ վարվելու կանոնների խախտում, ինչն	Ծառայության անվտանգության կանոնների խախտում	Դատաքննություն

									անզգուշությամբ առաջացրել է մահ		
5.	Նարեկ Մարտիրոսյան	20.02.12		ԼՂՀ	Ստեփանակերտ	Ցոր	Պաշտոնական	ՀՀ ՊՆ քննչական ծառայություն	Չի նշվել	Առողջական խնդիրներ՝ թոքաբորբ, ոչ պատշաճ բժշկական ծառայության տրամադրում	Նախաքննություն
6.	Աղաբեկ Միրզոյան	22.02.12		ԼՂՀ	Զաբրայիլ	Զաբրայիլի զորամաս	Պաշտոնական	ՀՀ ՊՆ քննչական ծառայություն	ՀՀ Քր. Օր. 242 հոդվածի 2-րդ մաս՝ ճանապարհային երթևեկության և տրանսպորտային միջոցների շահագործման կանոնները խախտելը, որն անզգուշությամբ առաջացրել է մարդու մահ	Դժբախտ պատահար, ավտովթար	Նախա քննություն
7.	Ալբերտ Ադիբեկյան	23.02.12	ՀՀ		Տավուշ, Չինարի գյուղի	Չինարի գյուղի մարտական հենակետ	Պաշտոնական	ՀՀ ՊՆ քննչական ծառայություն	ՀՀ Քր. Օր. 104 հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործության հատկանիշներով (սպանություն)	Ծառայության անվտանգության կանոնների խախտում	
8.	Տիգրան Վարյան	29.02.12		ԼՂՀ		Եղնիկներ	Ոչ պաշտոնական	ՀՀ ՊՆ քննչական ծառայություն	ՀՀ Քր. Օր. 110 հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործության հատկանիշներով (ինքնասպանության հասցնելը)	Պաշտոնական դիրքի չարաշահում	Նախա քննություն
9.	Սևակ Ասլիկյան	14.03.12	ՀՀ		Տավուշ, Նոյեմբերյան	Նոյեմբերյանի զորամասի հենակետ	Պաշտոնական	ՀՀ ՊՆ քննչական ծառայություն	ՀՀ Քր. Օր. 104 հոդվածի 1-ին մաս	Հրադադարի ռեժիմի խախտում	Նախա քննություն

10.	Արտակ Շահբազյան	19.03.12	ՀՀ		Տավուշ, Նոյեմբերյան	Կողբ/ Կարմիր բլուր սահման. հատված	Պաշտոնական	ՀՀ ՊՆ քննչական ծառայություն	ՀՀ Քր. Օր. 104 հոդվածի 1-ին մաս	Հրադադարի ռեժիմի խախտում	Քրեական գործը կասեցվել է
11.	Հայկ Ղազարյան	07.04.12	ՀՀ		Գորիս	Սիսիանի հոսպիտալ	Ոչ պաշտոնական	ՀՀ ՊՆ քննչական ծառայություն	ՀՀ Քր. Օր. 376-րդ հոդվածի հատկանիշներով՝ «անփույթ վերաբերմունքը ծառայության նկատմամբ»	Առողջական խնդիրներ՝ մինինգիտ, ոչ պատշաճ բժշկական ծառայության տրամադրում	
12.	Զորիկ Մարգարյան	18.04.12	ՀՀ		Տավուշ	Մեհրաբներ	Ոչ պաշտոնական	ՀՀ ՊՆ քննչական ծառայություն	ՀՀ Քր. Օր. 104 հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործության հատկանիշներով (սպանություն)	Նախնական տվյալներով հրադադարի ռեժիմի խախտում	Նախա քննություն
13.	Արսեն Աքելյան	24.04.12	ՀՀ		Լոռի	Թեժ լեռ	Ոչ պաշտոնական	Զինդատա խազություն	Չի նշվել	Դժբախտ պատահար, ավտովթար	Նախա քննություն
14.	Արամ Եսայան *	27.04.12	ՀՀ		Տավուշ, Ոսկեպար	Ոսկեպար Բերդ սահմանայի ն հատված	Պաշտոնական	ՀՀ ՊՆ քննչական ծառայություն	ՀՀ Քր. Օր. 104 հոդվածի 2–րդ մասի 1-ին և 6-րդ կետեր՝ սպանություն՝ երկու կամ ավելի անձանց, շատերի կյանքի համար վտանգավոր եղանակով	Հրադադարի ռեժիմի խախտում	Նախա քննություն
15.	Դավիթ Աբգարյան *	27.04.12	ՀՀ		Տավուշ, Ոսկեպար	Ոսկեպար Բերդ սահմանայի ն հատված	Պաշտոնական	ՀՀ ՊՆ քննչական ծառայություն	ՀՀ Քր. Օր. 104 հոդվածի 2–րդ մասի 1-ին և 6-րդ կետեր՝ սպանություն՝ երկու կամ ավելի անձանց, շատերի կյանքի համար վտանգավոր	Հրադադարի ռեժիմի խախտում	Նախա քննություն

									եղանակով		
16.	Արշակ Ներսիսյան *	27.04.12	ՀՀ		Տավուշ, Ոսկեպար	Ոսկեպար Բերդ սահմանայի ն հատված՝ Մովսես գյուղ	Պաշտոնական	ՀՀ ՊՆ քննչական ծառայություն	ՀՀ Քր. Օր. 104 հոդվածի 2–րդ մասի 1-ին և 6-րդ կետեր՝ սպանություն՝ երկու կամ ավելի անձանց, շատերի կյանքի համար վտանգավոր եղանակով	Հրադադարի ռեժիմի խախտում	Նախա քննություն
17.	Հովհաննես Նիկողոսյան	27.04.12		ԷՂՀ		Հակամարտ շփման գիծ	Ոչ պաշտոնական	ՀՀ ՊՆ քննչական ծառայություն	ՀՀ Քր. Օր. 110 հոդվածի 1-ին մաս՝ ինքնասպանության հասցնելու հատկանիշներով	Հրադադարի ռեժիմի խախտում (նախնական տվյալ) Զինվոր-զինվոր, զինվոր-սպա փոխհարաբերություն (հետագա տվյալ)	Նախա քննություն
18.	Գոռ Մարտիրոսյան	08.05.12		ԷՂՀ	Ստեփանակերտ		Ոչ պաշտոնական	ՀՀ ՊՆ քննչական ծառայություն	Չի նշվել	Առողջական խնդիր՝ հանկարծամահ, ոչ պատշաճ բժշկական ծառայության տրամադրում	Նախա քննություն
19.	Արմեն Հարությունյան	17.05.12		ԷՂՀ	Հադրութ	38401	Ոչ պաշտոնական	ՀՀ ՊՆ քննչական ծառայություն	ՀՀ Քր. Օր. 376 հոդվածի 2 մաս՝ պաշտոնական անձի անփույթ վերաբերմունք ծառայության նկատմամբ, որն	Մարտական ականի պայթյունի հետեւանքով դժբախտ	Նախա քննություն

									անզգուշությամբ առաջացրել է մահ	պատահար	
20.	Խաչատուր Մելիքյան	24.05.12			Գյումրի	Գյումրու հիվանդանոց	Ոչ պաշտոնական	ՀՀ ՊՆ քննչական ծառայություն	ՀՀ Քր. Օր. 377 հոդվածի 2-րդ մաս՝ մեքենաներ վարելու կամ շահագործելու կանոնները խախտելը	Դժբախտ պատահար, վրաերթ	Նախա քննություն
21.	Սարո Սամվելյան	01.06.12		ԼՂՀ	Հադրութ	38401	Ոչ պաշտոնական	ՀՀ ՊՆ քննչական ծառայություն	ՀՀ Քր. Օր. 110 հոդվածի 1-ին մաս՝ ինքնասպանության հասցնելու հատկանիշներով		Նախա քննություն
22.	Հրաչ Սարգսյան*	04.06.12	ՀՀ		Տավուշ, Չինարի	Բերդավան-Չինարի սահման. հատված	Պաշտոնական	ՀՀ ՊՆ քննչական ծառայություն	ՀՀ Քր. Օր. 104 հոդվածի 2–րդ մասի 1-ին և 6-րդ կետեր՝ սպանություն՝ երկու կամ ավելի անձանց, շատերի կյանքի համար վտանգավոր եղանակով	Հրադադարի ռեժիմի խախտում/ նախնական տվյալ/	Նախա քննություն
23.	Զոհրապ Բալաբեկյան*	04.06.12	ՀՀ		Տավուշ, Չինարի	Բերդավան-Չինարի սահման. հատված	Պաշտոնական	ՀՀ ՊՆ քննչական ծառայություն	ՀՀ Քր. Օր. 104 հոդված 1-ին մաս՝ սպանություն՝ ապօրինաբար մեկ ուրիշին դիտավորությամբ կյանքից զրկելը	Հրադադարի ռեժիմի խախտում /նախնական տվյալ/	Նախա քննություն
24.	Կարեն Դավթյան*	04.06.12	ՀՀ		Տավուշ, Չինարի	Բերդավան-Չինարի սահման. հատված	Պաշտոնական	ՀՀ ՊՆ քննչական ծառայություն	ՀՀ Քր. Օր. 104 հոդված 2-րդ մասի 1-ին, 6-րդ եւ 7-րդ կետեր՝ սպանություն՝ երկու կամ ավելի անձանց, շատերի կյանքի համար վտանգավոր եղանակով, մի խումբ անձանց կամ	Հրադադարի ռեժիմի խախտում /նախնական տվյալ/	Նախա քննություն

									կազմակերպված խմբի կողմից Հրադադարի ռեժիմի խախտում /նախնական տվյալ/		
25.	Վարդան Օհանյան	06.06.12		ԼՂՀ	Հորադիզ	Հորադիզի հակամարտ շփմ. գիծ	Պաշտոնական		ՀՀ Քր. Օր. 34-104 հոդվածի 2-րդ մասի 1-ին, 6-րդ եւ 13-րդ կետեր՝ (սպանության փորձ 2 կամ ավելի անձանց, շատերի կյանքի համար վտանգավոր եղանակով. ազգային, ռասսայական կամ կրոնական ատելության կամ կրոնական մոլեգարության շարժառիթով) եւ 104-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 6-րդ եւ 13-րդ կետեր՝ (սպանություն՝ շատերի կյանքի համար վտանգավոր եղանակով, ազգային, ռասսայական կամ կրոնական ատելության կամ կրոնական մոլեգարության շարժառիթով):	Հրադադարի ռեժիմի խախտում /նախնական տվյալ/	Նախա քննություն
26.	Արամ Գյուլնազարյան	18.06.12		ԼՂՀ	Վայոձ ձորի 131-րդ կմ հատված	ԼՂՀ ՊԲ արևելյան հատվածում տեղակայ ված մարտական	Ոչ պաշտոնական	ՀՀ ՊՆ քննչական ծառայություն	ՀՀ Քր. Օր. 104 հոդվածի երկրորդ մասի 13-րդ կետ՝ սպանություն՝ կրոնական կամ ազգային ատելության շարժառիթներով	Հրադադարի ռեժիմի խախտում /նախնական տվյալ/	Նախա քննություն

						դիրքեր					
27.	Էդգար Հովհաննիսյան	20.06.12	ՀՀ		Վայոց Ձոր		Պաշտոնական	ՀՀ ՊՆ քննչական ծառայություն	ՀՀ Քր. Օր. 242-րդ հոդվածի 2-րդ մասի հատկանիշներով (ճանապարհային երթևեկության և տրանսպորտային միջոցների շահագործման կանոնների խախտելը, որն անզգուշությամբ առաջացրել է մարդու մահ)	Դժբախտ պատահար, ավտովթար	Նախա քննություն

ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐՈՒՄ ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՄԱՀԱՑՈՒԹՅԱՆ ԴԵՊՔԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Ա. Հրադադարի ռեժիմի խախտում

1. Սեւակ Ասլիկյան

Հայաստանի ՊՆ N զորամասի պաշտպանության շրջանի N մարտական հենակետում, 2012 թ-ի մարտի 14-ին, ժամը 17:25-ի սահմաններում հայտնաբերվել է նույն զորամասի պայմանագրային զինծառայող, կրտսեր սերժանտ Սեւակ Ալբերտի Ասլիկյանի դին:

ՊՆ մամուլի ծառայությունից հայտնել են, որ փաստի առթիվ ՀՀ ՊՆ քննչական ծառայության վեցերորդ կայազորային քննչական բաժնում 14.03.2012թ. հարուցվել է քրեական գործ ՀՀ քր. օր-ի 104 հոդվածի 1-ին մասի (սպանություն) հատկանիշներով:

Ըստ ՊՆ նախնական տվյալների՝ Ս. Ասլիկյանը գլխի շրջանում մահացու հրազենային վնասվածքը ստացել է հակառակորդի կողմից արձակված գնդակից:

2012 թ-ի հոկտեմբերի 1-ի դրությամբ դեռեւս շարունակվում է նախաքննությունը:

2. Արտակ Մնացականի Շահբազյանը

2012 թ-ի մարտի 19-ին ՀՀ Տավուշի մարզի սահմանային դիրքերում արձանագրվել է հակառակորդի կողմից հրադադարի խախտման հերթական դեպքը, որի հետևանքով սպանվել է ՀՀ ԶՈւ զինծառայող **Արտակ Մնացականի Շահբազյանը**.[1] Ինչպես տեղեկացրել է ՀՀ ՊՆ տեղեկատվության վարչությունը, Ժամը 14.20-ի սահմաններում N զորամասի մարտական հենակետում հակառակորդի կողմից արձակված կրակոցից մահացու հրազենային վիրավորում է ստացել զինծառայող Արտակ Մնացականի Շահբազյանը: aravot.am կայքի տվյալներով, միջադեպը տեղի է ունեցել Նոյեմբերյանի

[1] http://www.tert.am/am/news/2012/03/19/mayor/

տարածաշրջանի պաշտպանական դիրքերում: Ըստ կայքի՝ 35-ամյա մայորը, ով Արարատի քաղաքացի էր, տեղափոխել են Նոյեմբերյանի հիվանդանոց, ուր 5 րոպե անց մահացել է:

«Հայացք» թերթը գրում է, որ մարտական հենակետում զոհվածը գումարտակի հրամանատար է՝ ծնված 1977թ.: Ըստ թերթի՝ Արտակ Շահբազյանը «Վիլիս» ավտոմեքենայով Կողբի «Ղիասի քար» հանդամասի Կարմիր բլուր սահմանային տարածք է մեկնել հենակետում ստուգում անցկացնելու նպատակով, սակայն ադրբեջանական դիպուկահարի կրակոցից զոհվել է ավտոմեքենայի մեջ: [2]

Ըստ «Հայացք» թերթի՝ հավաստի տվյալներով՝ Արտակը դիմել է զորամասի հրամանատար Նորայր Ամիրխանյանին, որպեսզի իրեն թույլատրեն այդ օրը ծառայության դուրս չգալ, քանի որ կինը պետք է ծննդաբերի: Սակայն հրամանատարը մերժել է:

Արտակ Շահբազյանի մահվան փաստի առթիվ 2012 թ-ի մարտի 19-ին հարուցվել է քրեական գործ: ՀՔԱ Վանաձորի գրասենյակին ՀՀ զինվորական դատախազության կողմից տրամադրած տեղեկատվության համաձայն քրեական գործի վարույթը կասեցվել է:

3. **Արամ Եսայան**
4. **Արշակ Ներսիսյան**
5. **Դավիթ Աբգարյան**

Ապրիլի լույս 27-ի գիշերը, ժամը 02-ից 04-ի սահմաններում Այգեպար-Մովսես ճանապարհին ադրբեջանական զինուժը գնդակոծել է մարդատար ավտոմեքենա, որի մեջ գտնվող պայմանագրային 3 զինծառայողները զոհվել են: Այգեպարի գյուղապետ Անդրանիկ Այդինյանի տվյալներով՝ մեքենան եղել է «Վազ-2107» մակնիշի: Գյուղապետն ասաց, որ դեպքը եղել է հին, ռազմական ճանապարհին, որից քաղաքացիական բնակչությունը երբեմն օգտվում է: Ա. Այդինյանն ասել է , որ ապրիլի

[2] http://mardik.am/am/հասարակություն/բանակ/item/134104-հակառակորդի-գնդակից-մահացել-է-հայ-սպա-արտակ-շահբազյանը-նրա-որդին-կծնվի-հոր-թաղման-օրը

27-ին, առավոտից մինչեւ ժամը 16-ը ադրբեջանցիները Այգեպարի վրա գնդացրային կրակ են բացել, տուժածներ չկան: Բերդի հիվանդանոցի տնօրեն Արամ Հարությունյանը հայտնել է, որ զոհվածների մարմինները դիահերձվել են: Լրատվամիջոցի ներկայացուցիչը հեռախոսազրույց է ունեցել զինվորական քննիչ Կառլեն Աբազյանի հետ, ով հրաժարվել է տալ զոհվածների անունները, խորհուրդ տալով այդ հարցով դիմել Պաշտպանության նախարարության քննչական բաժին: Զոհվածների Բերդ քաղաքից են, երիտասարդ տարիքի: Երեքն էլ ամուսնացած են:[3]

Դեպքի առնչությամբ նախաքննություն է սկսվել, և դեռևս պաշտոնական վարկած հայտարարված չէ:

Սակայն մինչ կհրապարակվեն նախաքննության արդյունքները, դեպքի առնչությամբ արդեն շրջանառվում են տարբեր վարկածներ: Որոշ լրատվական կայքեր տարածել են տեղեկություն, ըստ որի՝ սպանվածների դիակներն ապականված են եղել: Սա կվկայեր այն մասին, որ ադրբեջանական դեսանտային-դիվերսիոն խումբ է ներխուժել ՀՀ զորքերի վերահսկողության տակ գտնվող տարածք: Որոշ ոչ հավաստի աղբյուրների համաձայն՝ զինծառայողները հարձակման պահին ինքնակամ լքած են եղել զորամասը և զենք չեն ունեցել՝ պաշտպանվելու ադրբեջանցի դավադիրներից՝ հեշտ թիրախ դառնալով նրանց համար: Մինչ այդ շրջանառվում են նաև լուրեր, թե հնարավոր է, որ դեպքը ներքին վիճաբանության հետևանք է եղել:

Դեպքին նախորդող մի քանի օր շարունակ Տավուշի մարզում՝ սահմանի մոտ, բազմիցս խախտվել է հրադադարի ռեժիմը: Դրանցից մեկի ընթացքում ադրբեջանցի դիպուկահարները գնդակոծել են Դովեղ գյուղի մանկապարտեզը, որի հետևանքով անհրաժեշտ է եղել շտապ տարհանել երեխաներին և աշխատակազմին:

[3] http://tesankyun.am/2012/04/%D5%A6%D5%B8%D5%B0%D5%BE%D5%A5%D5%AC-%D5%A7-%D5%BA%D5%A1%D5%B5%D5%B4%D5%A1%D5%B6%D5%A1%D5%A3%D6%80%D5%A1%D5%B5%D5%AB%D5%B6-3-%D5%A6%D5%AB%D5%B6%D5%AE%D5%A1%D5%BC%D5%A1%D5%B5%D5%B8%D5%B2/

«ԱրմենիաՆաուն» այցելել է միջադեպից միակ կենդանի մնացած Արկադի Եսայանին: Զինծառայողը, թեև կատարվածից հետո դեռևս հոգեբանորեն ուշքի չէր եկել, սակայն առողջական լուրջ խնդիրներ չուներ: [4]

Տավուշի բնակիչները Tert.am-ին տեղեկացրել են, որ ադրբեջանական խմբի հարձակման պահին զինվորականները եղել են ոչ զինվորական մեքենայով և համազգեստով, ինչն էլ ենթադրել է տալիս, որ հարձակումը ծրագրված է եղել ոչ թե կոնկրետ զինվորականների, այլ հենց գյուղի խաղաղ բնակիչների դեմ: Միջադեպի ընթացքում վիրավորված զինծառայողը պատմել է, որ ինքը հրաշքով է փրկվել. ադրբեջանցիները պարզապես նրան էլ է մահացած կարծել: Ադրբեջանցիները զինված են եղել խլացուցիչ զենքերով, հետևաբար հայազգի զինծառայողները մոտալուտ վտանգը չեն զգացել: Ամեն ինչ սկսվել է դիմապակու փշվելուց հետո:[5]

ՀՔԱ Վանաձորի գրասենյակի կողմից ձեռք բերված տեղեկատվությունը

Դեպքից հետո ՀՔԱ Վանաձորի գրասենյակի ղեկավարը եղել է Նոյեմբերյանում ու Բերդում, հանդիպել ու զրուցել սպանվածներից մեկի հոր, ընկերների հետ: Արդյունքում պարզվել է, որ միջադեպը «ռազբորկայի» հետևանք չէ: Վիճաբանության վարկածը հերքվում է նաև այն հանգամանքով, որ միջադեպի զոհերը միմյանց հետ մտերիմ հարաբերությունների մեջ են եղել: Հետքերի զննությամբ պարզ է դաձել նաեւ, որ մեքենայի տանիքին՝ վարորդի ուղղությամբ կրակի հետք կա, նաև նռնակ են օգտագործել: Միջադեպի ժամանակ մեքենայում գտնված չորրորդ զինծառայողի, որը պատահաբար կենդանի է մնացել, հետ չի զրուցել, որովհետև հայտնել են, որ վիճակը վատ է՝ շոկային վիճակում է:

6. **Հրաչ Սամվելի Սարգսյան**
7. **Զոհրաբ Խաժակի Բալաբեկյան**
8. **Կարեն Կամոյի Դավթյան**

[4] http://www.armenianow.com/hy/society/37732/armenia_azerbaijan_border_shootings
[5] http://www.tert.am/am/news/2012/04/29/tavush/

Հունիսի 4-ին հայ-ադրբեջանական սահմանի հյուսիսարևելյան հատվածում ադրբեջանական կողմը հերթական անգամ կոպտորեն խախտել է շփման գծում հաստատված հրադադարի ռեժիմը՝ փորձելով ներթափանցել ՀՀ Տավուշի մարզի Բերդավան և Չինարի գյուղերի ուղղությամբ տեղակայված հայկական հենակետեր:

Ձեռնարկված միջոցառումների և հայ զինառայողների քաջարի գործողությունների արդյունքում դիվերսիոն առաջխաղացումը կասեցվել է և տալով կորուստներներ՝ հակառակորդը ետ է մղվել: Ադրբեջանական գործողության արդյունքում զոհվել են ՀՀ ԶՈՒ զինծառայողներ Հրաչ Սամվելի Սարգսյանը, Զոհրաբ Խաժակի Բալաբեկյանը և Կարեն Կամոյի Դավթյանը:[6]

9. Վարդան Օհանյան

Հունիսի 5-ի, լույս 6-ի գիշերը՝ ժամը 04.15-ի սահմանում ղարաբաղա-ադրբեջանական հակամարտ զորքերի շփման գծի հարավային հատվածում (Հորադիզի ուղղությամբ) հակառակորդի հետախուզադիվերսիոն խմբի կողմից ձեռնարկվել է ԼՂՀ ՊԲ-ի մարտական դիրքերից մեկը ներթափանցելու հերթական փորձ:

ՊԲ Լրատվության եւ քարոզչության բաժնից հայտնել են, որ ադրբեջանական դիվերսիոն խմբի վնասազերծման գործողության ժամանակ զոհվել է կրտսեր սերժանտ Վարդան Ռոբերտի Օհանյանը, վիրավորվել են շարքային զինծառայողներ Արայիկ Գեղամի Մավրեյանը եւ Վոլոդյա Յուրայի Ծատրյանը:[7]

Վարդան Ռոբերտի Օհանյանը զորակոչվել էր բանակ 2011թ գարնանը՝ Աշտարակի զինկոմիսարիատից: Այս մասին NEWS.am-ի թղթակցի հետ զրույցում ասաց ՊՆ քննչական ծառայության հասարակայնության հետ կապերի բաժնի ավագ սպա Մերի Սարգսյանը:

[6] http://www.a1plus.am/am/official/2012/06/04/pn-chinar
[7] http://www.slaq.am/arm/news/62132/
http://www.epress.am/2012/06/06/%D5%86%D5%B8%D6%80-%D5%B0%D5%A1%D6%80%D5%B1%D5%A1%D5%AF%D5%B8%D6%82%D5%B4-%D5%80%D5%B8%D6%80%D5%A1%D5%A4%D5%AB%D5%A6%D5%B8%D6%82%D5%B4-%D5%A6%D5%B8%D5%B0%D5%BE%D5%A5%D5%AC-%D5%A7-1-%D5%BE%D5%AB.html

Նա նշեց, որ զինծառայողը 20 տարեկան էր, եւ մեկ տարուց պետք է ավարտեր ծառայությունը:

Նրա մահվան փաստի առթիվ ՀՀ ՊՆ քննչական ծառայությունում 2-րդ կայազորային քննչական բաժնում 2012 թ-ի հունիսի 6-ին հարուցվել է քրեական գործ՝ ՔՕ-ի 34-104 հոդվածի 2-րդ մասի 1-ին, 6-րդ եւ 13-րդ կետերով (սպանության փորձ 2 կամ ավելի անձանց, շատերի կյանքի համար վտանգավոր եղանակով. ազգային, ռասսայական կամ կրոնական ատելության կամ կրոնական մոլեգարության շարժառիթով) եւ 104-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 6-րդ եւ 13-րդ կետերով (սպանություն՝ շատերի կյանքի համար վտանգավոր եղանակով, ազգային, ռասսայական կամ կրոնական ատելության կամ կրոնական մոլեգարության շարժառիթով):[8]

10. Արամ Գյուլնազարյան

2012 թվականի հունիսի 18-ին ՊԲ արևելյան հատվածում տեղի է ունեցել հրադադարի ռեժիմի խախտում. Ադրբեջանական կողմը կրակոցներ է արձակել ԼՂՀ ՊԲ արևելյան հատվածում տեղակայված մարտական դիրքերի ուղղությամբ, ինչի հետևանքով մահացել է շարքային զինծառայող 1993թ. ծնված Արամ Գյուլնազարյանը: Ա. Գյուլնազարյանը հրազենային կրակոցից ստացված վնասվածքից մահացել է հոսպիտալ տեղափոխվելու ճանապարհին:[9]

ՊՆ մամուլի բաժինը պաշտոնապես հաստատել է այս լուրը: Զինծառայողի մահվան փաստի առթիվ առաջին տեղեկությունը տարածվել է ԶԼՄ-ներում, ինչից հետո լուրը հաստատելու հարցմանը՝ ուղղված ՊՆ-ին, հաստատվել է:[10] 2012 թ-ի հունիսի 18-ին հարուցվել է քրական գործ Քր. Օր. 104 հոդվածի 2-րդ մասի 13-րդ

[8] http://news.am/arm/news/108855.html
http://hetq.am/arm/news/15233/tshnamin-ays-angam-diversiayi-e-dimel-lxh-i-het-sahmanin-1-zoh-2-viravor.html
[9] http://1in.am/arm/armenia_society_90552.html
[10] http://haynews.am/hy/1340028004

կետով /սպանություն՝կրոնական կամ ազգային ատելության շարժառիթներով/: ՊՆ մամուլի խոսնակ Մերի Սարգսյանը հայտնել է, որ սա նախնական վարկածն է:[11]

Բ. Ինքնասպանություն/ինքնասպանության հասցնել

1. **Վահան Ասլիկյան**

Հունվարի 18-ին ժամը 12.35-ին՝ Նուբարաշենի զորամասերից մեկում՝ ենթասպա ***Վահան Ասլիկյանը*** իր բնակարանում ինքնասպանության փորձ է արել՝ խմելով մեծ քանակությամբ էսենցիա: Նա մահացել է «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» բժշկական կենտրոնի վերակենդանացման բաժանմունքում:[12]

Կինը հայտնաբերելով ծայրահեղ ծանր վիճակում գտնվող ամուսնուն դիմել է շտապ բուժօգնության: Նրան տեղափոխել են Գրիգոր Լուսավորիչ հիվանդանոց, որտեղ էլ ենթասպան մահացել է:

Այս լուրը հայտնել է ՀՀ պաշտպանության նախարարության քննչական ծառայության պետ Արմեն Հարությունյանը:

Փաստի առթիվ ՀՀ ՊՆ քննչական ծառայության 4-րդ կայազորային քննչական բաժնում ՀՀ Քր. Օր. 110 հոդվածի 1-ին մասի՝ ինքնասպանության հասցնելու հատկանիշներով հունվարի 18-ին հարուցվել է քրեական գործ և կատարվում է նախաքննություն:

Այնուհետեւ, փետրվարի 10-ին «Հրապարակ» թերթը տեղեկություններ է տարածել այն մասին, որ Վահանն ինքնասպանության գնացել է զորամասում ունեցած հսկայական պակասորդի պատճառով, որը նրա վրա բարդել են վաշտի հրամանատարն ու ևս մեկ հոգի: Վահանի բարեկամների խոսքով, նա վաշտն ընդունել է պակասորդով: «Վահանին համոզել են, ասել են՝ պակասորդով ընդունի, մենք հետագայում կլրացնենք այդ պակասը: Հետո Վահանն ուզեցել է տեղափոխվել այլ

[11] http://lurer.com/?p=27551&l=am&fb_source=message
[12] http://www.1in.am/arm/armenia_society_55221.html
http://www.a1plus.am/am/social/2012/01/19/entaspa#.Txho1RA7mMs.facebook
http://www.slaq.am/arm/news/61941/

ծառայության, սակայն նրան ասել են՝ ոնց ուզում ես, փակիր պակասորդը»,- պատմել է Վահանի բարեկամներից մեկը:13 Ըստ news.am կայքի՝ մահվանից առաջ թողած բացատրագրում Վահան Ասլիկյանը մասնավորապես խնդրում է իրեն չմեղադրել, որովհետեւ երբ ինքն աշխատանքի է անցել վաշտում, վաշտի հրամանատարն իրեն ասել է, որ «ընդունի վաշտը պակասորդով, բայց գրի, որ լրիվ նորմալ է»: Նա նաեւ նշել է, որ բացատրագիրը գրված է իր ձեռքով, որի համար ստորագրում է:[14] Նախաքննությունը շարունակվում է:[15] Կասկածյալներ և ձերբակալվածներ չկան:

Մահվանից շուրջ 5 ամիս անց դեռևս կալանավորված անձինք չկան: Ենթասպայի կինը՝ Քրիստինեն ամուսնու մահվան մեջ մեղադրում է բացատրագրում նշված անձանց՝ Վաշտի հրամանատար Բուդաղյան, փոխգնդապետ Մուրադյան, ում հետ մահվանը նախորդող գիշերը հերթապահության է եղել Վահան Ասլիկյանը:[16]

“Ես շատ կուզեի, որ այդ երկուսը պատժվեն, որովհետը մեղավորները հենց նրանք են են, այդ երկուսն էլ նախորդ գիշերը հերթապահ են եղել և ինչ եղել է այդ մի գիշերվա մեջ է եղել…ինչ կարող էր լինել, որ մարդ երեխային տանի մանկապարտեզ ու հետո գա էսենցիա խմի…”

Կինը համոզված է, որ մահվանը նախորդող գիշերը նրա նկատմամբ ճնշումներ ու սպառնալիքներ են եղել, այլապես նա այդ քայլին չէր դիմի և իր 5 և 7 տարեկան անչափահասն երեխաներին չէր լքի: Ենթասպա Վահան Ասլիկյանը այլ զորամաս տեղափոխվելու խնդրանքով դիմում էր գրել հրամանատարությանը: Կինը համոզված է, որ խնդիրներն ակհայտ են եղել, հակառակ դեպքում նա ինքնակամ չէր ցանկանա փոխել զորամասը և գնալ Ղարաբաղ:

Բացատրագրից բացի, ենթաքսպայի կինը ամուսնուն պատկանող թղթերի մեջ մի շարք ապրանքների ցուցակներ է հայտնաբերել, որտեղ նշված են դրանց քանակն ու տեսակը՝ վրաններ, անկողնային սպիտակեղեն, աթոռներ, սեղաններ… Նա

[13] http://www.slaq.am/arm/news/51733/
[14] http://news.am/arm/news/93619.html
[15] http://verjinlurer.am/archives/29364
[16] http://www.lragir.am/armsrc/right65874.html

ենթադրում է, որ սա հենց այն պակասորդն է, որի մասին ամուսինը գրել է մահվանից առաջ թողած գրության մեջ: Դատելով ապրանքի տեսականուն կից նշված թվերից խոսքը մեծ գումարների մասին է:

Հայտնաբերված այս ցուցակներից մեկը կինը փոխանցել է նախաքննական մարմնին՝ քննիչ Նարեկ Երեմյանին, սակայն հետագայում պարզվել է, որ այն անհետացել է գործի նյութերից: Կինը քննիչից պահանջել է ցուցակի պատճենը իրեն տրամադրել, սակայն խոստացել, բայց այդպես էլ չեն տվել: Հետո գործով քննիչը փոխվել է և երբ կինը շարունակել է պահանջել ցուցակը՝երկու քննիչներով առերեսում են կազմակերպել, որի նպատակն է եղել ենթասպայի կնոջը ապացուցել, որ նման ցուցակ իրենց մոտ չի եղել: “Երկու քննիչ նստել առերեսում էին անում իմ ներկայությամբ, ասեցի սա ինձ ցիրկ է հիշեցնում, շոուի նման ինչ որ բան էին սարքել, էսքանից հետո հավատամ քննիչներին: Ինձ ասում են կարողա մեզ ցույց ես տվել, բայց հետ ես վերցրել: Ժխտում են, թե ամուսինս պակասորդի հետ կապ է ունեցել”- պատմում է Քրիստինեն: Քննիչն ասել է, որ այդ ցուցակը էական նշանակություն չունի գործի համար, սակայն կինը վստահ է, որ դա շատ կարևոր փաստաթուղթ էր և դա է անհետանալու պատճառը: Վահանին այն աստիճանի էին հասցրել, որ ինքը չգիտակցեց ինչ արեց» - նշել է Վ. Ասլիկյանի կինը:

Մարտ ամսին Վ. Ասլիկյանի կինը դիմում է գրել Պնախարար Սեյրան Օհանյանին՝ հանդիպման խնդրանքով: Դիմումում նշել է , որ չի աշխատում: Նախարարությունը արձագանքել է, նրան զորամասերից մեկում աշխատանք են առաջարկել, ինչին Քրիստինեն համաձայնել է, սակայն մինչ օրս այդ առաջարկը իրականություն չի դարձել:

Նախարարի հետ հանդիպումը մերժել են՝ ասելով, թե 2010-ին հանդիպել ես նրա հետ:

2. Կառլեն Կարոյի Բաղդասարյան

Փետրվարի 2-ին ժամը 17.00-ի սահմանում ղարաբաղա-ադրբեջանական հակամարտ զորքերի շփման գծի հարավային (Հորադիզ) պաշտպանական ուղղությամբ տեղակայված դիրքերից մեկում հրազենային մահացու վիրավորում է ստացել Ստեփանակերտի զինկոմիսարիատից զորակոչված ՊԲ ժամկետային զինծառայող, 1992թ. ծնված ***Կառլեն Կարոյի Բաղդասարյանը***: Դեպքից անմիջապես հետո, զինվորական հոսպիտալ տեղափոխելու ճանապարհին վիրավորը մահացել է:[17]

Պաշտոնական տեղեկատվություն

Tert.am-ին ԼՂՀ Պաշտպանության բանակի լրատվական ծառայությունից հայտնել են, որ Կառլեն Բաղդասարյանը մարտական հենակետում նախնական տվյալներով ինքնասպանություն է գործել:[18] Այնուհետեւ զինծառայողի մահվան առիթով ՀՀ քր. օր-ի 110 հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործության հատկանիշներով (ինքնասպանության հասցնելը) քրեական գործ է հարուցվել:[19]

«Ժողովուրդ»-ը տեղեկացրել է, որ փետրվարի 2-ին՝ ժամը 17:00-ի սահմաններում, ղարաբաղա-ադրբեջանական շփման գծի հարավային՝ Հորադիզի պաշտպանական ուղղությամբ տեղակայված դիրքերից մեկում ստացած հրազենային վերքից մահացած Կառլեն Կարոյի Բաղդասարյանի հետ կապված միջադեպը տեղի է ունեցել Կառլենի և իր ծառայակից ընկերների միջև:

20-ամյա Կառլենի բարեկամները շատ վախվորած են խոսել նրա մահվան մասին: Նրանք նշել են, թե նկատել են, որ Կառլենի երեսն ամբողջությամբ այրված է եղել, բայց թե որն է եղել դրա պատճառը, վերջիններս չեն պարզաբանել: Զինվորի հարազատներն ասել են, որ իրենք սպասում են, թե երբ է Կառլենի սպայական անձնակազմը

[17] http://lurer.com/?p=10948&l=am
http://1in.am/arm/regional_karabagh_58332.html
http://lurer.com/?p=11325&l=am
http://www.aravot.am/2012/02/21/40608/
[18] http://tert.am/am/news/2012/02/03/soldersuicide/
[19] http://news.am/arm/news/92141.html

ներկայանալու և բացատրելու, թե իրականում ինչ է տեղի ունեցել նրա և ծառայակիցների միջև:

Զինվորի հարազատները հայտնել են, որ Կառլենի դեմքն ամբողջովին այրված էր, բայց թե որն է եղել դրա պատճառը, վերջիններս չեն պարզաբանել:[20]

Զինվորի հարազատներն ասել են, որ իրենք սպասում են, թե երբ է Կառլենի սպայական անձնակազմը ներկայանալու և բացատրելու, թե իրականում ինչ է տեղի ունեցել նրա և ծառայակիցների միջև:

Ըստ նախնական տեղեկությունների՝ Կառլենը վիճել է իր համածառայողների հետ: «Երևի իրեն հասցրել են, որ կռվել ա, թե չէ ինքն ըտենց տղա չէր, որ կռվեր, անգամ էնքան հավասարակշռված էր, որ շատ դժվար էր իրեն հունից հանել: Մենք շատ ցավ ենք ապրում, որ նման ձևով մահացավ, շատ ցավալի էր, որ իրան ըտենց ձևով բերեցին տուն՝ իրա երեսը վառված էր», – պատմել է զինվորի հարևաններից մեկը, ով չի ցանկացել ներկայանալ՝ պատճառաբանելով, որ իր խոսքերը կարող են վատ անդրադառնալ գործի բացահայտման վրա:[21]

3. Տիգրան Վարյան

Փետրվարի 29-ին ժամը 9.30-ից 10.00-ի սահմաններում ՊԲ հյուսիսային ուղղությամբ տեղակայված Ղարաբաղի «Եղնիկներ» զորամասի դիտակետում, իրեն ամրակցված ինքնաձիգից սպանվել է Աբովյանի բնակիչ, 2011թ-ին Կոտայքի զինկոմիսարիատից զորակոչված, ՊԲ ժամկետային զինծառայող, 19-ամյա Տիգրան Վանոյի Վարյանը: [22]

ՊԲ Լրատվության և քարոզչության բաժինը տեղեկացրել է, որ միջադեպի հետ կապված մանրամասները ճշտելու համար տարվում է քննություն: 110 հոդվածի 1-ին մասով ՀՀ ՊՆ քննչական ծառայության 3-րդ կայազորային քննչական բաժնում

[20] http://lurer.com/?p=11325&l=am
[21] http://www.epress.am/2012/02/07/%D4%BC%D5%82%D5%80-%D5%B8%D6%82%D5%B4-%D5%A6%D5%B8%D5%B0%D5%BE%D5%A1%D5%AE-%D5%A6%D5%AB%D5%B6%D5%AE%D5%A1%D5%BC%D5%A1%D5%B5%D5%B8%D5%B2%D5%AB-%D5%AE%D5%B6%D5%B8%D5%B2%D5%B6%D5%A5%D6%80%D5%A8-%D5%BD.html
[22] http://news.am/arm/news/95635.html

հարուցվել է քրեական գործ եւ նշանակվել է դատաբժշկական փորձաքննություն: Իսկ նախաքննությունը շարունակվում է:

NEWS.am-ի հետ զրույց ունեցած Տիգրան Վարյանի մորաքրոջ աղջիկը՝ Թամարան այդ ընթացքում դեռ տեղյակ չէր, որ քրեական գործը հարուցվել է ինքնասպանության հասցնելու հատկանիշներով. «Ոչ ոք չի հավատում ինքնասպանությանը: Իրենք դեռ հաստատ չեն ասել, որ դա ինքնասպանություն է: Սկզբում հեռախոսով են ասել, բայց գրավոր ոչ մի բան չեն ասել: Հիմա դիահերձարանում են (դա ժամը 13:00-ին էր)»: Նա նաեւ ասաց, որ իրենք չեն կարող ասել դա զինվորների, թե սպաների միջեւ ծագած միջադեպի արդյունք կլինի, քանի որ Տիգրան նման խնդիրների մասին չի խոսել: Թամարան նշեց, որ Տիգրանը ծառայության է մեկնել դպրոցն ավարտելուց անմիջապես հետո, նա ցանկանում էր ատամնատեխնիկ դառնալ եւ ծառայությունից հետո քոլեջում սովորելու նպատակ է ունեցել: Թամարայի եղբայրը, ով մեկ տարով է մեծ Տիգրանից, մեկ տարի նույն զորամասում միաժամանակ ծառայել է եղբոր հետ: Իսկ եղբոր զորակոչվելուց մոտավորապես 2 ամիս հետո այդ դեպքն է տեղի ունեցել:

Հելսինկյան ասոցիացիայի փորձագետ Ռուբեն Մարտիրոսյանը, ով Տիգրանի ծնողների առաջարկով մասնակցել է դիահերձմանը հայտնել է, որ Տիգրանին հրազենով սպանելուց առաջ դաժան ծեծի են ենթարկել. զինվորը վնասվածքներն ստացել է մահվանից անմիջապես առաջ: Նրա խոսքով, Տիգրանի դեմքի վրա առկա են եղել բռնության հետքեր:

«Քթարմատին, բերանի շրջանում սալջարդեր եւ քերծվածքներ, ծնոտի դիմային գծի ներքեւի հատվածում, հրազենային վերքից մի քանի սանտիմետր ներքեւ՝ երկարավուն կապտուկ: Վերջին վնասվածքը հուշում է այն մասին, որ զինվորին սպանելու պահին զինվորը փորձել է դիմադրել, բայց դա նրան չի հաջողվել, որովհետեւ դիմադրել է մարդասպանների խմբին: Տիգրանի մահը, սակայն, վրա է հասել հրազենային կրակոցի արդյունքում: Ավելին՝ Տիգրան Վարյանը չէր կարող ինքնասպան լինել, քանի որ նա նույնիսկ չէր հասցնի այդ քայլին դիմել, որովհետեւ ծեծելուց հետո անմիջապես սպանել

են»,-ասել է նա:

Յուրա Բադալյանին, ով ՊՆ քննչական ծառայության կենտրոնական ապարատի բաժնի պետն է, երբ Ռուբեն Մարտիրոսյանը հարցրել է, թե ի՞նչ փաստ ունի, որ զինվորն ինքնասպան է եղել այն դեպքում, երբ ինքը դիահերձարանում համոզվել է, որ նրան սպանել են, վերջինս պատասխանել է, թե եթե մենք գրենք սպանություն, հետո պարզվի ինքնասպանություն է, էլ չեն կարող սպանությունը փոխել ինքնասպանության, որովհետեւ ծնողները չեն հավատա: Աբսուրդը, ըստ Ռուբեն Մարտիրոսյանի, այն է, որ ստացվում է, որ սպանվածների ծնողներն ավելի հակված են հավատալու ինքնասպանության վարկածին, քան՝ սպանության:

Հարցին, թե իրենց ունեցած տվյալներով, զինվորին խոշտանգել են սպանե՞ր, թե՞ ծառայակիցները, Մարտիրոսյանը պատասխանել է. «Այսօր գոյություն ունի մի համակարգ, որ այդ սպանությունը կարող են բարդել ցանկացած անձի վրա, որի համար անհրաժեշտ է ընդամենը իրեղեն ապացույցները ոչնչացնել, ստրուկի կարգավիճակով բանակում ծառայող զինվորներին ծեծել, որ ցուցմունք տան այն անձի դեմ, ով իրենց համար սլաքավար է»:[23]

Կան գործով կալանավորվածներ՝ կրտսեր սերժանտ Էրիկ Սարգսյանը և Գեվորգ Մանուկյանը, դիտակետի ավագ լեյտենանտ Հովհաննես Աշոտի Հակոբյանը, ով մեղադրվում է ՀՀ քրեական օրենսգրքի 375 հոդվածի 1-ին մասով (իշխանությունը չարաշահել, իշխանազանցություն կամ իշխանության անգործություն): Կալանավորվածներին առաջադրվել են մեղադրանքներ՝

- Զինծառայողների փոխհարաբերությունների կանոնակարգային կանոնները խախտելը նրանց միջև ստորադության հարաբերությունների բացակայության դեպքում.
- Մարտական հերթապահություն կամ մարտական ծառայություն կրելու կանոնները խախտելը.

[23] http://news.am/arm/news/95635.html

- Իշխանությունը չարաշահելը, իշխանազանցությունը կամ իշխանության անգործությունը.[24]

4. Հովհաննես Մարատի Նիկողոսյան

2012 թվականի ապրիլի 27-ին գրանցվել է մահվան դեպք ԼՂՀ մարտական դիրքերից մեկում: Զորամասերից մեկի մարտական դիրքում արձանագրվել է հրազենային զենքից մահացու վիրավորման դեպք, որի արդյունքում զոհվել է նույն զորամասի ժամկետային զինծառայող շարքային Հովհաննես Մարատի Նիկողոսյանը:

Փաստի առթիվ ապրիլի 27-ին հարուցվել է քրեական գործ՝ ՀՀ Քր. Օր. 110 հոդվածի 1-ին մասի՝ ինքնասպանության հասցնելու հատկանիշներով եւ կատարվել նախաքննություն:[25]

Ձերբակալվել են մեկ սպա եւ մեկ համածառայակից, որի նկատմամբ այնուհետեւ փոխվել է խափանման միջոցը՝ ստորագրությամբ չհեռանալու մասին, սակայն հոկտեմբերի 2-ին համածառայակիցը ձերբակալվել է:

5. Սարո Սամվելյան[26]

Հունիսի մեկին ժամը 8:20-ի սահմաններում ԼՂՀ Պաշտպանական բանակի Հադրութի զորամասերից մեկում, մարտական դիրքում հրազենային մահացու վիրավորում ստանալով, զոհվել է 1993 թվականին Գյումրիում ծնված ժամկետային զինծառայող Սարո Արտյոմի Սամվելյանը: Սարո Արտյոմի Սամվելյանի մահվան փաստով հարուցվել է քրեական գործ՝ Քրեական օրենսգրքի 110 հոդվածի առաջին մասի հատկանիշներով (ինքնասպանության հասցնելը): Այս մասին NEWS.am-ի թղթակցին ասել էր ՊՆ քննչական ծառայությունը:[27] Երիտասարդը մինչ բանակ զորակոչվելը երևանյան բուհերից մեկի ուսանող է եղել:

[24] http://hetq.am/arm/news/12430/khmbakayin-spanutyun-te-inqnaspanutyun-inchic-e-mahacel-zinvory-video.html
[25] http://www.slaq.am/arm/news/58177/
http://hetq.am/arm/news/13725/evs-mek-zoh-banakum.html

[26] http://www.a1plus.am/am/social/2012/06/02/soldier
[27] http://news.am/arm/news/108038.html

Կես տարի առաջ էր մեկնել բանակ: Ինչպես հարազատներն են ասում, նպատակով, որ կվերադառնա և ուսումը կշարունակի: Մի քանի օր առաջ էլ երիտասարդը արձակուրդ էր եկել: Մոտ տասն օր առաջ էր մեկնել ծառայած զորամասը:

Հունիսի 3-ին, ժամը 12:30-ի սահմաններում, ***Ասպարեզ լրագրողների ակումբի*** նախագահը զինկոմիսարիատի հերթապահ մասի սպայից փորձել է տեղեկանալ դեպքի մանրամասներին: «Մայորն ասաց, թե իրենց էլ գրեթե ոչինչ հայտնի չէ միջադեպի մասին: Ավելին՝ Երևանից են անգամ զանգում ու փորձում որոշակի տեղեկություններ ստանալ, մինչդեռ, ըստ մայորի, իրենք առայժմ այդ մասին պաշտոնական գրություն չեն ստացել ու հստակ որևէ բան ասել չեն կարող: Հայտնի է միայն, որ հրաձգություն է տեղի ունեցել, սակայն, թե դա արդյունք է թշնամու կողմի՞ց արձակված, թե՞ ներքին հրաձգության, սպան վստահաբար ասել չկարողացավ:

Ինչ վերաբերում է զոհվածի ծնողների հետ զինկոմիսարիատի կողմից գոնե այս ընթացքում, կապ հաստատելուն, մայորն հայտնեց, թե փորձեր արվել են Սամվելյան ամուսինների բջջային հեռախոսներին զանգել, սակայն դրանք արձանագրում են, թե անհասանելի են:
Հերթապահ մայորին մի բան էլ էր հայտնի. զոհված գյումրեցի ժամկետային զինծառայողի դին նախօրեին՝ ժամը 17-ին պետք է Ստեփանակերտից փոխադրվեր Երևան, իսկ, թե երբ էր բերվելու հայրական օջախ, նա դարձյալ որոշակի ոչինչ չկարողացավ ասել:»

Դիակն ուղեկցող փոխգնդապետին, ով Հադրութի զորամասից ուղեկցել էր դիակը, ու ում Սարոյի հարազատները «Կամբատ»-ով էին դիմում, հարց ուղղեցին, թե ինչու՞ են հաճախացել սպանությունների դեպքերը բանակում, միայն վերջին օրերին Գյումրի սպանված զինվորներ է, որ բերում են ու բերում. «Ախր թուրքի գյուլլից չեն մահացել, յուրայինների ձեռքով են զոհվել ու՝ ոչ պատերազմական պայմաններում»: Դարձյալ հռետորական հարցի պես հնչեց, թե սպայական կազմը ինչու՞ չի կարողանում կարգ ու կանոն հաստատել ժամկետային զինծառայողների միջև ու, թե՝ եթե ի վիճակի չեն այդ

մարդիկ դա անել, ինչու՞ չեն հեռացվում համակարգից, իրենց զբաղեցրած գործերից, թող ուրիշներին զիջեն իրենց պաշտոնները՝ այնպիսի մարդկանց, ովքեր բանակային գործին իրապես տիրապետում են:

Թե չէ՝ ըստ Սարոյի հարազատների, ինչպե՞ս պատահեց, որ մարտական դիրքեր գնացին մի քանի հոգով, իսկ հետո այնտեղ ծեծեցին անմեղ, «անվնաս էրեխին» ու հետո էլ Նոյեմբերյանից զորակոչված սերժանտը հրազենից վերջնականապես սպանեց նրան: Զոհվածի հորաքույրն հարց տվեց, թե ինչու՞ էին Սարոյին «հների» հետ ուղարկում դիրքեր, հավանաբար, նկատի ուներ հին ծառայողներին. «Մի՞ թե դժվար էր դա կանխելը»: Հորաքույրը նաև չարացած էր «Կամբատի» հանդեպ այն պատճառով, որ վերջինս Երևանում իբր թե պաշտոնապես ասել էր, թե Սարոն ինքնասպանություն է գործել:

«Կամբատը» լուռ լսում էր բոլորին ու ոչ մի կերպ իր անհամաձայնությունը չէր հայտնում: Միայն մարմնեղ մի երիտասարդ, որ ուղեկցում էր փոխգնդապետին և քաղաքացիական հագուստ էր կրում, նրա փոխարեն հոխորտաց. «Բանակ է, ամեն ինչ էլ կլինի, կճանապարհեք, կգնան, ու բարով խերով կգան»:

Այդ պահին, ի պատասխան նրա հոխորտանքի, հարազատներից կամ հարևաններից մեկն ասաց, թե նրա «բարով-խերով» ասածը այս դեպքին է՞լ է վերաբերում: Հետո փոխգնդապետին ասացին, թե թաղում շուտով երկու զինակոչիկի էլ են ճանապարհելու բանակ, հիմա ի՞նչ խորհուրդ կտա, ի՞նչ սրտով ճանապարհեն: «Կամբատն» այս դեպքում էլ խորհուրդ չուներ նրանց տալու:

Ռոպեներ անց, զոհված զինվորի երիտասարդ ազգականներից մեկը, ով նույնպես այդ թաղից էր, նետվեց փոխգնդապետի ուղղությամբ ու բացականչեց. «Ժողովուրդ, խփե՛ք սրան, սա Սարոյիս սպանողն է»: Բնակիչներից ոմանք, հատկապես երիտասարդները, վազեցին նրա ուղղությամբ, իսկ փոխգնդապետի նույն ուղեկիցը, բավականաչափ հանդուգն պահվածքով, այդ աղերսագին ճիչն արձակած

երիտասարդի պարանոցից դիմահար բռնած, պահում էր ու մարդկանց կողմը բղավում, թե կանգնեն իրենց տեղերում: Այստեղ էին նաև ռազմական ոստիկանության սպաներ, ու քիչ անց, այս ամբողջ խառնաշփոթի ու աղմուկ-աղաղակի մեջ, փոխգնդապետն անհետացավ, փախցրին տարան:[28]

2012-ի հունիսի 2-ին ***ՀՔԱ Վանաձորի գրասենյակի*** ներկայացուցիչների հետ ունեցած հանդիպման ժամանակ հունիսի 1-ին մահացած զինծառայողի հարազատները հայտնեցին իրենց հայտնի որոշ մանրամասներ դեպքի առնչությամբ: Ս. Սամվելյանի հորեղբայրը, ով ներկա էր եղել դիահերձմանը փաստեց, որ նրա մարմնի վրա եղել են արյունազեղումներ, կապտուկներ, ինչպես նաև դիմային կրակոց՝ դեմքի՝ բերանի շրջանում: Մահացած զինծառայողի տան մոտ հավաքված հարազանտերից ոմանք իրենց խոսքում նշում էին, որ կրակոցից առաջ հավանաբար կռիվ է եղել, և նախքան կրակոցը Ս. Սամվելյանը ենթարկվել է բռնության: Պաշտոնապես ոչ Գյումրու զինկոմիսարիատը, և ոչ էլ զորամասը տեղեկություն չի փոխանցել զինվորի ծնողներին և հարազատներին դեպքի պատճառների մասին, ինչ պայմաններում եւ ինչի հետեւանքով տեղի ունեցել դեպքը: Ս. Սամվելյանը դեպքից մի քանի օր առաջ արձակուրդ եկած է եղել, և բարեկամներն ասում են, թե խնդիրներ չեն նկատել, և ոչ էլ բողոքել է ծառայությունից: Զորամաս վերադառնալուց հետո, հեռախոսազանգերով կապի մեջ են եղել, բացառությամբ վերջի 2-3 օրը: Հարազատները նշում են նաև, որ դեպքի մասին մանրամասներ իմանալու համար փորձել են զանգել զորամաս՝ նրա ծառայակիցներին և հրամանատարական կազմից մի քանիսին, սակայն վերջիններս տարբեր պատճառներով կամ խուսափում են խոսել ծնողների հետ, կամ անջատած են պահում բջջային հեռախոսները: Ս. Սամվելյանի դիակը տուն ուղեկցող հրամանատարը / կամբատը/ հանգուցյալի տանը հավաքված մարդկանց խուսափում էր հստակ պատասխաններ տալ դեպքի մանրամասների առնչությամբ:

Գործի կապակցությամբ կալանավորվել են ավագ լեյտենանտ Ռազմիկ

[28] http://www.tert.am/am/news/2012/06/03/gyumreci-zinvor/

Թխանյանը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 365 հոդվածի առաջին մասով (Մարտական հերթապահություն կամ մարտական ծառայություն կրելու կանոնները խախտելը) և 375 հոդվածի առաջին մասով (Իշխանությունը չարաշահելը, իշխանազանցությունը կամ իշխանության անգործությունը): Կալանավորվել է նաև ժամկետային զինծառայող, կրտսեր սերժանտ Սերյոժա Կարապետյանը 359 հոդվածի առաջին մասով (Զինծառայողների փոխհարաբերությունների կանոնագրքային կանոնները խախտելը նրանց միջեւ ստորադասության հարաբերությունների բացակայության դեպքում), 365 հոդվածի առաջին մասով (Մարտական հերթապահություն կամ մարտական ծառայություն կրելու կանոնները խախտելը) և 375 հոդվածի առաջին մասով (իշխանությունը չարաշահելը, իշխանազանցությունը կամ իշխանության անգործությունը): Վերջիններս կալանավորվել են հունիսի 8-ին:[29]

Գ. Սպանություն

1. Փայլակ Շահնազարյան

Հունվարի 27-ին՝ ժամը 03:05-ի սահմաններում, ԼՂՀ N մարտական դիրքում ստացած հրազենային մարմնական վնասվածքից տեղում մահացել է նույն զորամասի ժամկետային զինծառայող, շարքային ***Փայլակ Շահնազարյանը***:[30] Փայլակ Շահնազարյանը Տավուշի մարզից էր:

Պաշտոնական տեղեկատվություն

Փաստի առթիվ ՊՆ քննչական ծառայության երրորդ կայազորային քննչական բաժնում քրեական օրենսգրքի 104 հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործության հատկանիշներով (սպանություն) հարուցվել է քրեական գործ, կատարվում է նախաքննություն: ՊՆ քննչական ծառայությունից տեղեկացրեցին, որ

[29] http://lurer.com/?p=30671&l=am
[30] http://lurer.com/?p=10325&l=am

սպանություն կատարելու մեղադրանքով ձերբակալվել է նույն զորամասի ժամկետային զինծառայող, եֆրեյտոր Խաչատուր Սարգսյանը:[31]

ՀՀ ՊՆախարարը անդրադառնալով այս դեպքին, նշել է, որ այդ դեպքը տեղի է ունեցել զինվորական ծառայության պայմանների խախտմամբ եւ նաեւ՝միջանձնային հարաբերությունների խախտման արդյունքում: Հարուցված քրեական գործի շրջանակներում մեղավորներ են ձերբակալվել: Եթե տեսնենք, որ սպաները մեղավոր են, ապա նրանք անպայման պատասխանատվություն կկրեն: Ծառայողական քննության արդյունքում կպարզվի՝ սպա մեղավո՞ր է, թե՞ ոչ, որովհետեւ միջադեպը տեղի է ունեցել երկու անձերի միջեւ»:[32]

Շրջանառվող լուրերի համաձայն, Խաչատուր Սարգսյանը Փայլակ Շահնազարյանի երեսին ատամի մածուկ է քսել վերջինիս քնած եղած ժամանակ, իսկ արթնանալուն պես Շահնազարյանը հայհոյել է զինակցին, ինչից հետո Խաչատուր Սարգսյան սպանել է ծառայակցին:[33]

Հարկ է նշել, որ Փայլակի մահվան լուրը 3 օր ուշ է հայտարարվել:

Փայլակի հորեղբայրը՝ Վարազդատ Շահնազարյանը, Իջևանի զինկոմիսարիատից, նաև Փայլակի թաղմանը եկած հրամանատարներից լսել է, որ տղային սպանել են պատահաբար: «Պոստերի է եղել: Գնացել է զուգարան, հետ գալուց նշանաբան են հարցրել: Ինքը կամաց է ասել, լավ չի լսվել, ու էն ծառայակիցը կրակել է վրան: Իրենց ասելով եմ այդքանն ասում, իրականությունը մենք չենք կարող իմանալ», - պատմել է նա:

Փայլակի հարազատները լսել են, որ իրենց որդու վրա կրակող զինվորը դեպքից հետո իրեն վատ է զգացել, և չի կարողանում խոսել, նաև, որ 7 փամփուշտ է արձակվել

[31] http://news.am/arm/news/91295.html
[32] http://www.slaq.am/arm/news/51034/%D5%86%D5%A1%D5%AD%D5%A1%D6%80%D5%A1%D6%80%D5%B6-%D5%A1%D5%B6%D5%A4%D6%80%D5%A1%D5%A4%D5%A1%D6%80%D5%B1%D5%A5%D5%AC-%D5%A7-%D5%A6%D5%AB%D5%B6%D5%BE%D5%B8%D6%80%D5%AB-%D5%B4%D5%A1%D5%B0%D5%BE%D5%A1%D5%B6-%D5%A4%D5%A5%D5%BA%D6%84%D5%AB%D5%B6.html#.TyhFvrDBfKM.facebook
[33] http://7or.am/ar chives/93247

Փայլակի ուղղությամբ, որոնցից երկուսն են կպել տղային՝ մեկը՝ սրտին, մյուսը ոտքին: Բայց տեղեկությունը ՊՆ-ից չեն կարողացել ճշտել:[34]

2. Ալբերտ Արմենակի Ադիբեկյան

2012 թ-ի փետրվարի 23-ին ԶԼՄ-ներում տեղեկատվություն է տարածվել , որ այդ օրը՝ ժամը 13:50-ի սահմաններում, ՀՀ Տավուշի մարզի Չինարի գյուղի ուղղությամբ տեղակայված մարտական հենակետում ծառայողական պարտականությունները կատարելիս Ադրբեջանի Զինված ուժերի դիպուկահարի արձակած գնդակից գլխի շրջանում հրազենային վիրավորում է ստացել և զոհվել ՀՀ Զինված ուժերի ժամկետային զինծառայող Ալբերտ Արմենակի Ադիբեկյանը (ծնված՝ 1992թ.): Ըստ ՊՆ նախնական տվյալների՝ Ս.Ասլիկյանը գլխի շրջանում մահացու հրազենային վնասվածքը ստացել է հակառակորդի կողմից արձակված գնդակից: Այնուհետեւ, 2012 թ-ի մարտի 5-ին ՀՀ ՊՆ Մամուլի հաղորդագրությամբ հայտնել են, որ 2012 թվականի փետրվարի 23-ին, ժամը 13:50-ի սահմաններում ՀՀ ՊՆ N զորամասի մարտական հենակետում գլխի շրջանում մահացու հրազենային վիրավորում ստացած ժամկետային զինծառայող, շարքային Ալբերտ Արմենակի Ադիբեկյանի մահվան փաստի առթիվ ՀՀ ՊՆ քննչական ծառայության վեցերորդ կայազորային քննչական բաժնում ՀՀ քր. օր-ի 104 հոդվածի 1-ին մասով հարուցված քրեական գործի նախաքննության ընթացքում պարզվել և հիմնավորվել է, որ վերջինս սպանվել է ոչ թե հակառակորդի, այլ համածառայակցի՝ նույն զորամասի ժամկետային զինծառայող, շարքային Իգնատ Աշոտի Ենգիբարյանի կողմից արձակված գնդակից:

Սույն թվականի փետրվարի 27-ին Ի.Ենգիբարյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քր. օր-ի 104 հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործության հատկանիշներով և նրա նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել կալանավորումը: Պարզվել է նաև, որ Ա.Ադիբեկյանի՝ հակառակորդի կողմից սպանվելու վարկածի սկզբնաղբյուր է հանդիսացել Ի.Ենգիբարյանը:[35]

[34] http://www.lragir.am/armsrc/right59533.html#.TyegtvJ4IWQ.facebook
[35] http://www.mil.am/1330947861

3. Զորիկ Մերուժանի Մարգարյան

Ապրիլի 18-ին, մահվան ելքով հերթական դեպքն է գրանցվել զինված ուժերում:

Տավուշի մարզի Չինարի գյուղում տեղակայված «Մեհրաբներ» զորամասում հրազենային վնասվածքից մահացել է 22-ամյա ժամկետային զինծառայող Զորիկ Մերուժանի Մարգարյանը:

Ըստ նույն աղբյուրի՝ եւս մեկ ժամկետային զինծառայող՝ 22-ամյա Կարեն Մովսիսյանը ծանր վիրավորվել է: Նրանք երկուսն էլ զորակոչվել էին Արաբկիրի զինկոմիսարիատից 2010 թ. գարնանը եւ առաջիկայում պետք է զորացրվեին:

NEWS.am-ի թղթակցի հետ հեռախոսազրույցում Չինարի գյուղի գյուղապետ Սամվել Սաղոյանը նշել է, որ դեպքը տեղի է ունեցել հակառակորդի արձակած կրակոցների պատճառով:36 Տավուշի մարզի Չինարի գյուղի գյուղապետ Սամվել Սաղոյանն էլ ասել էր, որ դեռ իրենք էլ չգիտեն, թե զինվորն սպանվել է հակառակորդի՞ գնդակից, թե՝ զորամասի ծառայողների: «Մեհրաբներ» զորամասի գնդի հրամանատար Սեյրան Ղազարյանն էլ հրաժարվել էր պատասխանել հարցերին, պատճառով, թե ինքը լիազորված չէ նման տեղեկություններ տրամադրել:[37]

Փաստի առթիվ ՀՀ ՊՆ քննչական ծառայության վեցերորդ կայազորային քննչական բաժնում ՀՀ քր. օր-ի 104 հոդվածի 1-ին մասով հարուցվել է քրեական գործ և կատարվում է նախաքննություն:[38]

Այնուհետեւ, ապրիլի 20-ին Զլմ-ների տարածած տեղեկատվության համաձայն ապրիլի 18-ին հրազենային վնասվածքից զոհված 22-ամյա ժամկետային զինծառայող Զորիկ Մարգարյանի ու վիրավորված 22-ամյա Կարեն Մովսիսյանի դեպքի առնչությամբ ձերբակալվել է դասակի հրամանատար, հենակետի ավագ, ավագ լեյտենանտ Լենտուշ Գրիգորյանը: Սակայն ՀՀ ՊՆ քննչական վարչության հասարակության հետ կապերի ավագ սպա Մերի Սարգսյանը հերքել է այդ լուրը:[39]

[36] http://news.am/arm/news/101822.html
[37] http://karevor.com/?p=40389
[38] http://www.lragir.am/armsrc/country-lrahos63501.html

Մայիսի 27-ին NEWS.am-ի թղթակցի հետ զրույցում Զորիկ Մարգարյանի եղբայրը՝ Գարիկ Մարգարյանը, նշել է, որ եղբայրը մահացել է հակառակորդի կրակոցից հավելելով, որ դրան է տանում նշանակված քննության ընթացքը: «Դե փաստեր են բերում, չենք կարող չհավատալ: Մնացել է քննության վերջին փուլը՝ զենքերի քննությունը, որից հետո նոր վերջնականապես հնարավոր կլինի պատասխան տալ: Եթե դա էլ հաստատի, որ կրակոցը հակառակորդի կողմից է եղել, ապա մենք այդ վարկածին չհավատալու ոչինչ չունենք»,- նշել է Գարիկ Մարգարյանը: Իսկ այն հարցին, թեարդյոք վիրավորված Կարեն Մովսիսյանի հետ խոսել են եւ թե արդյոք նա հաստատել է այդ վարկածը, նա պատասխանել է. «Ինքը տեսել է, որ մարդ է, բայց չգիտի հակառակորդ է եղել, թե՝ ոչ: Բայց մտածում է, որ հակառակորդն է եղել, քանի որ կրակոցը հակառակորդի կողմից է եղել՝ այդ կողմից է մարդ կանգնած եղել»: Գ. Մարգարյանի ներկայացմամբ, մեկ շաբաթ հետո նոր հնարավոր կլինի միանշանակ պատասխան տալ:

Ներկա պահին ընթացքի մեջ է քննության վերջին փուլը՝ զենքի փորձաքննությունը:

Իսկ ավելի վաղ տեղեկացրել էին, որ «Մեհրաբ» զորամասում սպանված 21-ամյա Զորիկ Մարգարյանը կարող էր չծառայել բանակում, քանի որ քաշն ու հասակը չէին համապատասխանում, սակայն նա ինքն է ցանկացել գնալ բանակ: Այս մասին NEWS.am-ին հայտնել էր Զորիկի մայրը՝ Ալվինա Մարգարյանը: «Վերջին անգամ էլ եկավ թոռնիկիս քառասունքի օրը: Ճանապարհ դնելուց հետո ապրիլի 17-ին զանգահարեց ինձ ու երբ իմացավ, որ եղբայրը պետք է գնա Ռուսաստան, ասաց. «Չմտածես, մնաց 69 օր»: Հետո ասաց, որ ապրիլի 18-ին էլի կզանգի, բայց այդպես էլ չզանգեց»,-պատմել էր մայրը:[40]

Դ. Զենքի հետ վարվելու կանոնների խախտման հետեւանքով մահվան դեպքեր

[39] http://www.epress.am/2012/04/20/%D4%B2%D5%A1%D5%B6%D5%A1%D5%AF%D5%B8%D6%82%D5%B4-%D5%A6%D5%B8%D5%B0%D5%BE%D5%A1%D5%AE-%D5%A6%D5%AB%D5%B6%D5%AE%D5%A1%D5%BC%D5%A1%D5%B5%D5%B8%D5%B2%D5%AB-%D5%A3%D5%B8%D6%80%D5%AE%D5%B8%D5%BE-%D5%B1.html
[40] http://news.am/arm/news/107089.html

1. ***Մարատ Դիմակյանը*** 2010 թ-ի նոյեմբերի 12-ին զորակոչվել է Հաղրութի 38401 զորամաս: (Մարատը եղել է ՎՊՄԻ-ի պատմական ֆակուլտետի հեռակա բաժնի ուսանող):

Պաշտոնական տեղեկատվություն

Ըստ նախնական պաշտոնական վարկածի՝ նույն զորամասի ժամկետային զինծառայող, շարքային Գոռ Արայիկի Ալավերդյանը, խախտելով իրեն ամրակցված ինքնաձիգի հետ վարվելու կանոնները, կրակող է արձակել և աջ ուսագոտու շրջանում հրազենային վիրավորում է հասցրել Մարատ Դիմակսյանին, որը եղել է պատահականություն:

Փաստի առթիվ քրեական գործ է հարուցված ՀՀ քրեական օրենսգրքի 373 հոդվածի 3-րդ մասով նախատեսված հանցագործության հատկանիշներով (զենքի հետ վարվելու կանոնների խախտում, ինչն անզգուշությամբ առաջացրել է մահ):

ՀՔԱ Վանաձորի գրասենյակը զրուցել է Մարատի հարազատների հետ, որի ընթացքում ձեռք է բերվել հետեւյալ տեղեկատվությունը.

2011 թ-ի հունվարին տեղի է ունեցել Մարատի երդման արարողությանը, որին ներկա է գտնվել Մարատի հայրը: Ծնողները Մարատի հետ գրեթե ամեն օր հեռախոսազրույց են ունեցել:

2012 թ-ի փետրվարի 5-ին, ժամը մոտավորապես 19:20-ին, Մարատը մահացել է: Սակայն մինչ այդ, ժամը 15:45-ին Մարատը խոսել է ծնողների հետ: Ծնողների հավաստմամբ՝ նա շատ լավ տրամադրություն է ունեցել: Նա եղել է օրինակելի զինվոր: Մարատին նույնիսկ ցանկացել են նշանակել վաշտի ավագ, սերժանտ, սակայն ինքը չի ցանկացել:

Դիակը ծնողներին է հանձնել գումարտակի զամպալիտ Աշոտ Հարությունյանը

(հայրն ազգանունը լավ չի հիշում): Նա ծնողներին հայտնել է, որ Մարատի զինակից ընկերը՝ երեւանցի Գոռ Ալավերդյանը /որը սկզբում ծառայել է Վանաձորի ԴՈՒՑ զորամասում, հետո տեղափոխվել է Հադրութ, որը պետք է զորացրվեր 2012 թ-ի գարնանը/ զենքի հետ խաղալիս կրակել է Մարատին: Նրանք դիրքերում՝ դիտակետում եղել են երկուսով: Զամպալիտ Աշոտ Հարությունյանը դեպքի պատճառների մասին այլ մանրամասնություններ չի հայտնել:

Դեպքից հետո Մարատին դիրքերից երբ իջեցնելիս են եղել, նա դեռեւս կենդանի է եղել: Ըստ Մարատի հոր հորեղբոր՝ հերձող բժիշկը ասել է, որ նման դեպքերում արնահոսության մատճառով մահը կարող է վրա հասնել 10-15 րոպեում:

Ծնողները, սակայն, տեղեկություն են ստացել այն մասին, որ Մարատին իջեցնելիս մի քանի տրանսպորտային միջոց են փոխել: Հադրութի զորամասից դիրքերը գտնվել են 20-25 կմ հեռավորության վրա: Ըստ նրանց, այդ ամբողջ ընթացքում երեխան կենդանի է եղել, նույնիսկ մի քանի հոգի շորերը հանել, վերքը զննել են: Մարատը խնդրել է, որ իրեն փրկեն, քանի որ ծողներին պետք է տեսնի, երբ նրանք այցելության գան: Ըստ ծնողների տեղեկության, նա այս ամենը խոսել է մի լեյտենանտի հետ: /Այս մասին պատմել է Մարատի զինակից ընկերը:/

2012 թ-ի փետրվարի 5-ի գիշերը նախ հորեղբորը ասել են, թե Մարատը, զենքին չտիրապետելով իրեն կրակել է, իսկ հետո առավոտյան ժամը 9-ին, երբ եկել են զինկոմիսարիատից, ասել են, որ Մարատը կռիվ է արել, վիրավորվել է եւ մահացել: Սակայն հարազատները չեն հավատացել, որ Մարատը կարող էր վիճաբանել եւ այդ վարկածը անհնար են համարում:

Մահվան լուրը սկզբում հայտնել են Մարատի հոր հորեղբորը փետրվարի 5-ի գիշերը, լույս 6-ին զինվորական կոմիսարիատից: Իսկ հորեղբայրը արդեն հարազատներին հայտնել է առավոտյան 9-ին:

ՀՔԱ Վանաձորի գրասենյակ ուսումնասիրել է Մ. Դիմաքսյանի գործով

դատաձգաբանական, դատաբժշկական հետազոտությունների արդյունքները, վերլուծել դրանք:

Դիակի զննման ժամանակ ներկա է գտնվել Մարատի հոր հորեղբայրը: Ըստ նրա ներկայացրած նախնական տվյալների՝ /դեպքից մի քանի օր հետո/ երեխայի մարմնին, բացի կրակոցից, այլ վնասվածքներ չեն հայտնաբերվել: Գնդակը անցել է աջ թեւի վրայից եւ դուրս եկել ձախ թեւի /թիակի/ մոտ, իսկ գնդակը եղել է վերնազգեստի մեջ /հասակը եղել է 176 սմ/: Մի փոքր քերծվածք է հայտնաբերվել Մարատի քունքի շրջանում, սակայն բժիշկն ասել է, որ դա չէր կարող լինել մահվան պատճառ:

2012 թ-ի հունիսի 2-ին ՀՔԱ Վանաձորի աշխատակիցները հանդիպել են Դիմաքսյանի հարազատների՝ մասնավորապես դիահերձմանը ներկա գտնված /հոր հորեղբոր/ հետ՝ համեմատելու դատաբժշկական հետազոտությունների արդյունքները: Դիահերձմանը ներկա գտնված հարազատը, համեմատելով հետազոտության արդյունքները իր տեսածի հետ, որոշ բաների հետ անհամաձայնություն հայտնեց՝ մասնավորապես Դիմաքսյանի մարմնի վրա վնասվածքների տեղակայության հետ կապված: Ըստ հարազատի՝1) Մարատի աջ ոտքի կոճային հատվածի ուղիղ վերևի հատվածում ինքը նկատել է արնազեղում, ինչը դատաբժշկական հետազոտությունների արդյունքի պատկերում բացակայում է. 2) Մարատի դիակի վրա ինքը նկատել է, որ հրազենային վնասվածքի արտաքին հետքը եղել է աջ ուսագոտու/ ուսային հատվածի/ կողային մակերեսին, ինչպես նաև, հրազենային ելքային վնասվածքի հետք է նա նկատել/ համենայն դեպս այդպես է հիշում/, որ եղել է աջ թևի վերին մասի մկանային հատվածի ներքին շրջանում /ինչպես ինքն է նկարագրում՝ այրվածքի սպիանման կարմրած հետք/:

ՀՔԱ Վանաձորի գրասենյակի աշխատակիցները նաև հանդիպել են Դիմաքսյանի հետ նույն զորամասում ծառայած մի քանի զինվորների հետ, որոնց հետ քննարկել են մի քանի հարցեր՝ մասնավորապես, իրենց զորամասից հենակետային դիրքեր բարձրանալու կարգուկանոնը՝ ինչպես է այն կատարվում, ինչ

տեղակայվածություն ունի տվյալ դիտակետը, որում կատարվել է դեպքը, արդյոք ստանում են նախապատրաստական կանոնադրային ցուցումներ հենակետային դիրքերում ծառայության ու մարտական կանոնների պահպանման հետ կապված, զորամասում Դիմաքսյանի և Գոռ Ալավերդյանի հարաբերությունների մասին: Զրույցի ընթացքում պարզվել է, որ զորամասի զինծառայողները հենակետային դիրքեր գնալուց առաջ անցնում են 16 կետանոց կանոնադրային ցուցումներ՝ մարտական կանոնների պահպանության հետ կապված, նկարագրական որոշ տեղեկություն՝ դիրքերում իրենց տեղակայվածության մասին: Հայտնի է դարձել նաև, որ Գոռ Ալավերդյանը դեպքից մեկ շաբաթ առաջ է տեղափոխվել տվյալ զորամաս որպես ԿՊ-եշնիկ: Զինվորները խոսքի ընթացքում նշել են նաև, որ իրենց զորամաս նոր փոխադրված Գոռ Ալավերդյանը մի քանի անգամ դրսևորել է ագրեսիվ վարքագից այլ զինվորների նկատմամբ՝ հպանցիկ մատնաշելով դեպք, որը տեղի էր ունեցել իրենց ճաշարանում:

Գործը քննվում է Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանում: ՀՔԱ Վանաձորի գրասենյակի նախագահը հանդիսանում է տուժողի իրավահաջորդի ներկայացուցիչը: Վերջինս 2012 թ-ի սեպտեմբերի 24-ին միջնորդություն է ներկայացրել Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանին եւ գործը դատաքննության ուղարկել օրենքով սահմանված ընդդատյա դատարան, հիմնավորելով, որ տվյալ քրեական գործը ՀՀ սահմանադրության, Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի, Դատական օրենսգրքի եւ ՀՀ քրեական դատավարության օրենսքրքի պահանջների կոպիտ ոտնահարումներով ուղարկվել է Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարան, նստավայրը՝ ԼՂՀ ք. Ստեփանակերտ, որին տվյալ գործի քննությունը ընդդատյա չէր եւ այն որպես դատարան իրավասու չէր քննելու տվյալ գործը:

Հարկ է նշել, որ գործով առաջին նիստը հետաձգվել էր եւ նշանակվել սեպտեմբերի 25-ին, սակայն այդ նիստը եւս հետաձգվել է:

Ե. Առողջական խնդիրների/ոչ պատշաճ բժշկական ծառայության տրամադրման հետեւանքով մահվան դեպքեր

1. Նարեկ Արթուրի Մարտիրոսյան

ԼՂՀ «Ցոր» զորամասի զինծառայող՝ շարքային Նարեկ Մարտիրոսյանը մահացել է ՀՀ ՊՆ կենտրոնական կլինիկական զինվորական հոսպիտալում՝ երկկողմանի օջախային թոքաբորբ, ձախակողմյան էքսուդատիվ պլևրիտից: Նարեկ Մարտիրոսյանը զինվորական հոսպիտալ էր ընդունվել 2012 թ. փետրվարի 16-ին՝«երկկողմանի սուբտոտալ թոքաբորբ, էքսուդատիվ պլևրիտ» և անբարվար շնչառություն ախտորոշմամբ: Ըստ պաշտոնական տեղեկատվության՝ փաստի առթիվ ՀՀ ՊՆ քննչական ծառայության 4-րդ կայազորային քննչական բաժնում պատրաստվում են նյութեր, նշանակվել է դիակի դատաբժշկական փորձաքննություն:[41]

Նարեկ Մարտիրոսյանի հարազատներն ասում են, որ իրենց երեխային Երևան են տեղափոխել այն ժամանակ, երբ հիվանդությունն արդեն բարդացած է եղել: Նարեկի մոտ ախտորոշվել է երկկողմանի սուբտոտալ թոքաբորբ, 19-ամյա զինծառայողի կյանքը փրկել չի հաջողվել: «Իմ երեխան փետրվարի 11-ից կամ 10-ից պառկած ա եղել Ստեփանակերտի հոսպիտալում: Դրանից մեկ-երկու օր առաջ հավանաբար սանչաստում ա եղել, իսկ 16-ին նոր տեղափոխել են Երևան: Երևանում հենց առաջին օրվանից ինձ զգուշացրին, որ ծայրահեղ ծանր վիճակ ա, ապարատով պիտի շնչի երեխաս»,- Lragir.am-ի թղթակցին պատմեց Նարեկի մայրը՝ Նազիկ Հարությունյանը: Նրա խոսքով՝ Նարեկի հիվանդության մասին իրենց ժամանակին տեղյակ չեն պահել: «Ամսի 16-ի գիշերն եմ պատահական իմացել, որ երեխային տեղափոխել են Երևան»,- պատմեց նա: Նազիկ Հարությունյանը նշեց, որ տեղյակ չեն, թե Ստեփանակերտում բժիշկները Նարեկին ինչպես են վերաբերվել: «Չգիտեմ՝ դեղորայք ներարկել են, բուժում նշանակել են, թե ոչ: Բայց գիտեմ, որ ուշացած դեպք է: Իմ երեխան 10-11-ից պառկել ա այնտեղ, իսկ արդեն 16-ն էր, երբ տեղափոխեցին Երևան»,- ընդգծեց նա: Ըստ որդեկորույս մոր՝ «Սա առաջին դեպքը չէ, որ նման կերպ են վարվում զինվորի հետ:

[41] http://tert.am/am/news/2012/02/21/suicide/?sw

Նրանք իրավունք չունեին իմ երեխայի հետ նման կերպ վարվել»: Նազիկ Հարությունյանը նաև նշեց, որ շատ գոհ է Երևանի կենտրոնական կլինիկական զինվորական հոսպիտալի աշխատակիցներից. «Ամեն ինչ արել են, բայց ծանր վիճակ էր»: Նշենք, որ Նարեկը ծառայում էր ԼՂՀ Ցորի զորամասում: Մայրն ասում է, որ իր որդին ոչ մի առողջական խնդիր չի ունեցել: «Ես հունվարի 26-ին եմ տեսել իմ երեխային, ամբողջությամբ առողջ էր»,- ընդգծեց նա:[42]

Նարեկի ընտանիքն ապրում է Վայոց Ձորի մարզի Վայք քաղաքում:

Վայքի զինկոմ մայոր Կամո Հակոբջանյանը 2 օր անց լրատվամիջոցին հայտնել է, որ զինծառայողի դին արդեն տեղափոխվել է տուն եւ ավելացրել. «Ես մի բան ասեմ: Քաղաքացիական կյանքում նման դեպքեր լինում են ու շատ են լինում: Եղել ա դեպքը: Հիվանդություն է եղել, շուտ տարածվել է: Ինչ-որ եսիմ ինչ բաներ պետք չի մտածել: Քաղաքացիականում էլ է դեպք եղել, ես մի քանի դեպք գիտեմ, որ եղել են այսպիսի դեպքեր»,- ասաց զինկոմը՝ պնդելով, որ զինծառայողի մահվան հանգամանքների մասին ոչ մի «այլ բան» մտածել պետք չէ: Նա պատմեց, որ Նարեկը բանակ էր զորակոչվել անցած տարվա հունիսի 14-ին: «Մինչեւ բանակը ինքը առողջական խնդիրներ չի ունեցել: Դե, իրա մոտ արագ տարածվող թոքաբորբ է եղել: Իսկ զորակոչվելուց ինքը առողջ է եղել: Ուչեբկայում էլ է եղել: Ամեն ինչ նորմալ է եղել»,- ասաց Հակոբջանյանը: Նա պատմեց, որ Նարեկը մեծ եղբայր ունի, որը տարիներ առաջ նույնպես ծառայել էր ԼՂՀ պաշտպանության բանակում: «Նրանց հայրը հիվանդ է, երիկամների հիվանդություն ունի, Կարմիր Խաչի օգնությամբ հիմա Իտալիայում բուժվում է: Կարծեմ նա չգիտի էլ տեղի ունեցածի մասին ու չի էլ գալու: Այստեղ մայրն է ու պապը: Մենք էլ ինչով կարողանում՝ օգնում ենք: Զորամասի հետ գնացել էինք Երեւան, ինչով որ կարողացել ենք՝ օգնել ենք: Դե, տարբեր հարցեր են եղել: Հարազատների կողքը կանգնած ենք եղել: Էսօր Վայքի բոլոր ընտանիքներն էլ նույն

[42] http://lragir.am/armsrc/country60514.html3
http://www.1in.am/arm/armenia_society_61866.html

օրի են: Գործ չկա, բայց ինչ-որ բան անում են: Էս ընտանիքը պապն է պահում: Աշխատում է, թոշակ ա ստանում: Մայրն էլ է աշխատում»:[43]

2. Հայկ Ղազարյան

Տարբեր լրատվական միջոցների կողմից հայտարարվել է, որ 2012 թ-ի ապրիլի 7-ին Սիսանի հոսպիտալում մահացել է շարքային զինծառայող Հայկ Ղազարյանը: ՊՆ լրատվական վարչությունը տեղեկացնում է, որ դեպքի առնչությամբ հարուցվել է գործ՝ Քր. Օր. 376-րդ հոդվածի հատկանիշներով՝ «անփույթ վերաբերմունքը ծառայության նկատմամբ»: Ըստ նախնական տվյալների զինծայառողը համացել է մինինգիտից: [44]

ՊՆ լրատվական ծառայության աշխատակից Մուշեղ Աղեկյանը NEWS.am-ի թղթակցի հետ զրույցում հայտնել էր, որ Ղազարյանը զորակոչվել էր Վաղարշապատի զինկոմիսարիատից եւ ծառայություն էր անցնում Գորիսի զորամասում: Դեպքի կապակցությամբ այլ մանրամասներ հայտնի չեն, հարուցվել էր քրեական գործ քր.օր.-ի 376-րդ հոդվածի հատկանիշներով՝ «պետի կամ պաշտոնատար անձի անփույթ վերաբերմունք ծառայության նկատմամբ, որն անզգուշությամբ առաջացրել է ծանր հետեւանք, որպես պատիժ նախատեսվում է ազատազրկում 3-6 տարի ժամկետով»:[45]

Ոչ պաշտոնական տեղեկատվություն

Ըստ հայկի հարազատների՝ Հայկը առողջ է եղել մինչև բանակ գնալը: Հայկի հորեղբայրը լրատվամիջոցի հետ ունեցած զրույցում հայտնել է՝ այդ երեկո նա պարապմունք է ունեցել հետախուզական վաշտում: Հիվանդությունը նրա մոտ շատ արագ է զարգացել՝ 12 ժամում»: Հարազատները տեղեկացնում են , որ այդ օրը Հայկը խոսել է ծնողների հետ, ամեն ինչ լավ է եղել: Այնինչ մեկ օրվա մեջ նման

[43] http://www.armtimes.com/31703
[44] http://www.panorama.am/am/law/2012/04/08/soldier-dead/#.T4HI49zbr6Q.facebook
http://online-tv.am/content/%D5%AA%D5%A1%D5%B4%D5%AF%D5%A5%D5%BF%D5%A1%D5%B5%D5%AB%D5%B6-%D5%A6%D5%AB%D5%B6%D5%AE%D5%A1%D5%BC%D5%A1%D5%B5%D5%B8%D5%B2-%D5%B0%D5%A1%D5%B5%D5%AF-%D5%B2%D5%A1%D5%A6%D5%A1%D6%80%D5%B5%D5%A1%D5%B6%D5%AB-%D5%AF%D5%B5%D5%A1%D5%B6%D6%84%D5%A8-%D5%AD%D5%AC%D5%A5%D5%AC-%D5%A7-%D5%A1%D6%80%D5%A1%D5%A3-%D5%A6%D5%A1%D6%80%D5%A3%D5%A1%D6%81%D5%B8%D5%B2-%D5%B0%D5%AB%D5%BE%D5%A1%D5%B6%D5%A4%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6%D5%A8
http://news.am/arm/news/100435.html
http://www.1in.am/arm/armenia_society_74347.html
http://ankakh.com/2012/04/196265/
http://news.am/arm/news/100457.html
http://news.am/arm/news/101305.html
[45] http://news.am/arm/news/101305.html

զարգացումներ են եղել 16.30-ին է վատացել: Մինչ այդ պարզապես ջերմություն է ունեցել: Հայկի Հորեղբայրը նշում է, որ մահացած զինծառայողին համապատասխան բուժօգնություն են ցուցաբերել: Նրան տեղափոխել են զորամասի բուժկետ, դիմեդրոլ են ներարկել, այնուհետ Հայկը հրաժարվել է այնտեղ պառկել և ետ է գնացել զորամաս: Ավելի ուշ Հայկի վիճակը կտրուկ վատացել է, և նրան տեղափոխել են բուժկետ, այնուհետ Սիսիանի հոսպիտալ:[46]

Սակայն ըստ ինտերնետային լրատվամիջոցներից մեկի /http://www.top-news.am/index.php?newsid=8217&ng=7&nt=1/ տարածած տեղեկատվության՝ ապրիլի 7-ին մահացած ժամկետային զինծառայող, 19-ամյա Հայկ Նազարյանը /սկզբում զինծառայողի ազգանունը նշվել է նազարյան/ մահացել է երիկամների չգործելու պատճառով, որն էլ պատճառ է եղել Հայկի մոտ առկա ալերգիայի, որը, ըստ լրատվամիջոցի, հայտարարվել է բժիշկների կողմից:

Հայկ Ղազարյանի դպրոցական ընկերներից մեկը երեկ պատմել է, որ մինչ զորակոչվելը նա սովորում էր ԲՈՒՀ-ում (թե կոնկրետ որ, չգիտեր), իսկ դպրոցն ավարտել էր գերազանց առաջադիմությամբ: Ընկերը պատմել է նաեւ, որ դեպքի օրը նա զանգահարել է հորը, ասել է, որ ամեն ինչ կարգին է, պարզապես մի քիչ ջերմություն ունի եւ պետք է գնա բժշկի մոտ՝ ստուգվելու: Որոշ ժամանակ անց Հայկի ծնողները զանգահարել են նրան՝ պարզելու համար, թե ինչպես է զգում իրեն եւ ինչ է ասել բժիշկը, սակայն մի քանի ժամ շարունակ հեռախոսահամարը անհասանելի է եղել: Անհանգիստ ծնողները ճամփա են ընկել, հասել են զորամաս, որտեղ ասել են, որ Հայկը տեղափոխվել է հոսպիտալ: Հոսպիտալում նրանց ասել են, որ տղան մեկ ժամ առաջ մահացել է: Երեկ Հայկ Ղազարյանի դին հանձնվել է ծնողներին: Ավելի ուշ Հայկի ընկերներից Գոռը թերթին պատմել է, որ իրեն հայտնի են դարձել Հայկի մահվան որոշ հանգամանքներ: «Այդ օրը ինքն առավոտյան գնացել է պարապմունքի, իրեն լավ է զգացել, հետո գնացել է ճաշարան: Հաց ուտելուց հետո ասել է, որ իրեն այդքան էլ լավ չի զգում ու գնացել է բուժկետ: Տեսնելով, որ Հայկը

[46] http://news.am/arm/news/101305.html

երկար ժամանակ ա՝ ինչ չի վերադառնում բուժկետից, ծառայակիցները գնացել են նրա հետեւից բուժկետ: Ներս են մտել ու տեսել, որ ինքը պառկած է: Երբ իրան հարցնում են, թե ինչ է եղել, ասում է, որ իրեն այդքան էլ լավ չի զգում: Դրանից հետո է Հայկը զանգում ծնողներին ու ասում, որ տաքություն ունի, որ իրեն պետք է տեղափոխեն հոսպիտալ»,- պատմել է Գոռը եւ հավելել, որ Հայկը առողջական խնդիրներ երբեւէ չի ունեցել, զինծառայության անցնելուց առաջ զննվել է բժշկական հանձնաժողովի կողմից, եւ նրա մոտ որեւէ խնդիր չի հայտնաբերվել: Բայց Հայկի մոտ ժամանակ առ ժամանակ ալերգիկ երեւույթներ են ի հայտ եկել: Կոնկրետ ինչից էր ալերգիա ունեցել, ընկերը չգիտի, ասում է, սակայն, որ ժամանակ առ ժամանակ նկատել են, որ Հայկը հազում ու փռշտում է, իսկ երբ հարցրել են, թե ինչ է, Հայկը պատասխանել է, որ ալերգիա ունի:

Թերթը նշում է, որ բժիշկ-փորձագետների խոսքով՝ հնարավոր է, որ ալերգիան որոշակի ազդեցություն ունեցած լինի երիկամների գործունեության վրա, սակայն միանշանակ որեւէ բան ասել հնարավոր չէ, քանի որ ամեն օրգանիզմ ունի իր յուրահատկությունները: Փորձագետները չեն բացառում նաեւ, որ Հայկին դեղամիջոց է ներարկվել, որից նրա մոտ ալերգիա է առաջացել, ու հենց դա է եղել Հայկի առողջական վիճակի կտրուկ վատթարացման պատճառը: Ամեն դեպքում՝ հանգամանքները պարզվում են, նշանակվել է դատաբժշկական փորձաքննություն, եւ զինծառայողի մահվան իրական պատճառները հայտնի կդառնան ավելի ուշ: Հայկ Ղազարյանի ընկերների պնդմամբ, նրա ծառայությունը բանակում անցել է առանց միջադեպերի, որեւէ մեկի հետ խնդիր չի ունեցել, հետեւաբար բացառում են, որ նրա մահը ինչ-որ վեճի կամ այլ միջադեպի հետեւանք լինի:[47]

3. Գոռ Մարտիրոսյան

Մայիսի 8-ին, Ստեփանակերտի զորամասերից մեկում հանկարծամահ է եղել ժամկետային զինծառայող Գոռ Մարտիրոսյանը:

Անհասկանալի հանգամանքներում հանկարծամահ եղած զինվորը Hayeli.am-ի

[47] http://www.top-news.am/index.php?newsid=8217&ng=7&nt=1

տեղեկություններով, մահացել է շարահրապարակում վազելիս: Նա եղել է մեկ տարվա ծառայող, զորակոչված է եղել Գեղարքունիքի մարզի Սևանի շրջանի Դդմաշեն գյուղից:

Տեղեկատվությունը ճշտելու նպատակով լրատվամիջոցը զրուցել է ՀՀ պաշտպանության նախարարի մամուլի խոսնակ Մուշեղ Աղեկյանի հետ, վերջինը նշել է, որ հարցը պետք է ուղղել ԼՂՀ պաշտպանության բանակին:

Պաշտպանության բանակի լրտավության պատասխանատու Սենոր Հասրաթյանը հաստատել է տեղեկատվությունը՝ նշելով, որ դեպքը տեղի է ունեցել առավոտյան ֆիզպատրաստության ժամանակ եւ ընթանում է ծառայողական քննություն՝ հանգամանքները պարզվում են: Այլ տեղեկատվություն Սենուր Հասրաթյանը չի ներկայացրել՝ նշելով, որ քննություն է ընթանում:[48]

Դդմաշենի բնակիչները հայտնել են, որ Գոռը սրտի հետ կապված խնդիրներ ունեցել է դեռևս դպրոցական տարիներին: "8-րդ դասարանում նա մի անգամ ուշաթափվել է, որից հետո նրան դպրոցում արգելեցին ֆիզկուլտուրայի դասերին մասնակցել",- թերթի հետ զրույցում ասել է գյուղացիներից մեկը: Հարցին, թե զորակոչվելուց առաջ մանրամասն բուժզննում չի անցել, նրանք պատասխանել են. "Միգուցե բուժվել է, չգիտենք: Սովորած տղա էր: Մենք շատ զարմացած ենք, որ նման բան եղավ",- գրում է թերթը:

ՄԱՄՈՒԼ .am լրատվականի թղթակիցը ՊՆ քննչական ծառայությունից փորձել է պարզել՝ եթե զինվորը սրտի հետ կապված խնդիր է ունեցել, ինչու են զորակոչել բանակ, որի հետ կապված հայտնել են, որ դեպքի հետ կապված նյութեր են նախապատրաստվում ու փորձաքննությունը ցույց կտա՝ ունեցել է նա նման խնդիր, թե ոչ:[49] Գոր Մարտիրոսյանի դեպքի հետագա ընթացքի մասին դեռեւս պաշտոնական նոր

[48] http://www.1in.am/arm/armenia_society_80759.html
[49] http://www.mamul.am/am/news/9999/%D5%BD%D5%BF%D5%A5%D6%83%D5%A1%D5%B6%D5%A1%D5%AF%D5%A5%D6%80%D5%BF%D5%B8%D6%82%D5%B4-%D5%B0%D5%A1%D5%B6%D5%AF%D5%A1%D6%80%D5%AE%D5%A1%D5%B4%D5%A1%D5%B0-%D5%A5%D5%B2%D5%A1%D5%AE-%D5%A6%D5%AB%D5%B6%D5%BE%D5%B8%D6%80%D5%A8-%D5%BD%D6%80%D5%BF%D5%AB-%D5%AD%D5%B6%D5%A4%D5%AB%D6%80-%D5%A7-%D5%B8%D6%82%D5%B6%D5%A5%D6%81%D5%A5%D5%AC#.T6tf4IdO4cE.facebook

տվյալներ չկան, 2012 թ-ի հունիսի 26-ի դրությամբ դատաբժշկական հետազոտության արդյունքները պատրաստ չեն եւ գնտվում են ընթացքի մեջ, որի մասին տեղեկացնում է Hayeli.am-ը՝ հղում անելով ՀՀ ՊՆ լրատվական ծառայությանը:[50]

Զ. Դժբախտ պատահար

1. Աղաբեկ Միրզոյան

ԼՂՀ Ջաբրայիլի զորամասում ծառայող Աղաբեկ Միրզոյանը փետրվարի 22-ին ժամը 21.00-ի սահմաններում մահացել է ավտովթարի ժամանակ՝ կարճատև արձակուրդից հետո զորամաս մեկնելիս: ՊՆ քննչական ծառայության հասարակայնության հետ կապերի բաժինը տեղեկացնում է, որ որ գործը Սյունիքի մարզայինն քննչական բաժնում է, և կատարվում է նախաքննություն: Դեպքի մանրամասների հետ կապված՝ նշվում է, որ Սյունիքի մարզի Նռնաձոր գյուղից դեպքի ԼՂՀ Միջնավան քաղաք տանող ճանապարհին մեքենան դուրս է եկել երթևեկելի մասից եւ գլորվել ձորը: Վթարի հետևանքով վարորդն ու նրա որդին 17-ամյա Արտյոմ Միրզոյանը մարմնական վնասվածքներով տեղափոխվել են Սյունիքի մարզի Ագարակ քաղաքի հիվանդանոց, իսկ 19-ամյա Աղաբեկ Միրզոյանը տեղում մահացել է:[51]

2. Արսեն Աքելյան

Ապրիլի 24-ին ժ 13:00-ի սահմաններում Դիլիջան–Վանաձոր ավտոճանապարհի Թեժ լեռ կոչվող դաշտամիջյան ճանապարհի 6-րդ կմ հատվածում տեղի է ունեցել ավտովթար: ՀՀ ՊՆ պայմանագրային զինծառայող 42-ամյա Արսեն Աքելյանը վարելով «Կամազ 4310» մակնիշի ՊՆ–2181–Տ համարանիշի ավտոմեքենան նշված հատվածում շրջվել է: Վիրավոր վիճակում նրան տեղափոխել են զինվորական հոսպիտալ, որտեղ էլ մահացել է: Փաստի առթիվ քննությունը վարում է Զինվորական դատախազությունը:[52]

[50] http://hayeli.am/%D5%A6%D5%AB%D5%B6%D5%BE%D5%B8%D6%80%D5%AB%D5%B6-%D5%B9%D5%A7%D5%9E%D5%AB%D5%B6-%D5%BD%D5%BF%D5%B8%D6%82%D5%A3%D5%A5%D5%AC/
[51] http://news.am/arm/news/94650.html
[52] http://tert.am/am/news/2012/04/24/zintsarayogh/
http://mardik.am/am/%D5%B0%D5%A1%D5%BD%D5%A1%D6%80%D5%A1%D5%AF%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6/%D5%A2%D5%A1%D5%B6%D5%A1%D5%AF/item/136699-%D5%BA%D5%A1%D5%B5%D5%B4%D5%A1%D5%B6%D5%A1%D5%A3%D6%80%D5%A1%D5%B5%D5%AB%D5%B6-

3. Խաչատուր Մելիքյան

Մայիսի 24-ին, ժամը 15:15 սահմաններում ՀՀ պաշտպանության նախարարության զորամասերից մեկում ժամկետային զինծառայող, շարքային Գագիկ Գևորգի Հովակիմյանը, տեխնիկական սպասարկման աշխատանքներ կատարելուց հետո, «Կռազ» մակնիշի զինհամարանիշով մեքենան ավտոկայանատեղիում կայանելիս՝ ավտոմեքենայի դիմային մասով վրաերթի է ենթարկել նույն զորամասի ժամկետային զինծառայող, շարքային Խաչատուր Հակոբի Մելիքյանին:[53]

ՊՆ քննչական վարչության 10-րդ կայազորի քննչական բաժնում հարուցվել է քրեական գործ ՔրՕր-ի 377 հոդվածի 2-րդ մասի հատկանիշներով («Մեքենաներ վարելու կամ շահագործելու կանոնները խախտելը, որն անզգուշությամբ առաջացրել է մարդու մահ՝ պատժվում է ազատազրկմամբ՝ առավելագույնը հինգ տարի ժամկետով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով կամ առանց դրա»):[54] Մայիսի 26-ի դրությամբ Գագիկ Հովակիմյանը դեռեւս չի ձերբակալվել:[55]

4. Էդգար Հովհաննիսյան

2012թ-ի հունիսի 20-ին Վայոձ ձորի 131-րդ կմ հատվածում տեղի է ունեցել ավտովթար, ինչի հետևանքով մահացել է պայմանագրային 34-ամյա զինծառայող Էդգար Հովհաննիսյանը: Նրա հետ եղել են նաև 2 զինծառայող ուղևորներ՝ 24-ամյա Տիգրան Մխիթարյանը և 24–ամյա Վահե Դանիելյանը , որոնք մարմնական թեթև վնասվածքներով տեղափոխվել են հիվանդանոց: ՎԱԶ 2108» մակնիշի 31 US 042 համարանիշի ավտոմեքենան Երևան–Մեղրի ավտոճանապարհի 131–րդ կմ հատվածում ճանապարհի ձախ մասից դուրս է եկել երթևեկելի գոտուց, հարվածել սարալանջի թմբին և գլխիվայր շրջվել: ՊՆ քննչական վարչության

%D5%A6%D5%AB%D5%B6%D5%AE%D5%A1%D5%BC%D5%A1%D5%B5%D5%B8%D5%B2-%D5%A7-%D5%B4%D5%A1%D5%B0%D5%A1%D6%81%D5%A5%D5%AC

[53] http://www.aysor.am/am/news/2012/05/25/khachatur-meliqyan/

[54] http://1lur.am/am/?p=74856

[55] http://www.armtimes.com/33955

http://www.epress.am/2012/05/25/%D5%84%D5%A1%D5%B0%D5%BE%D5%A1%D5%B6-%D5%A4%D5%A5%D5%BA%D6%84-%D5%A2%D5%A1%D5%B6%D5%A1%D5%AF%D5%B8%D6%82%D5%B4-%D5%A6%D5%AB%D5%B6%D5%AE%D5%A1%D5%BC%D5%A1%D5%B5%D5%B8%D5%B2%D5%A8-%C2%AB%D4%BF%D5%8C.html

հասարակայնության հետ կապերի պատասխանատու Մերի Սարգսյանի փոխանցմամբ՝ հարուցվել է քրեական գործ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 2-րդ մասի հատկանիշներով (ճանապարհային երթևեկության և տրանսպորտային միջոցների շահագործման կանոնների խախտելը, որն անզգուշությամբ առաջացրել է մարդու մահ): Կատարվում է նախաքննություն:[56]

Է. Անփույթ վերաբերմունք ծառայության նկատմամբ, որն առաջացրել է անզգուշությամբ ծանր հետևանքներ

1. Արմեն Սարգսի Հարությունյան

Մայիսի 17-ին մահացել է 2011-ի դեկտեմբրի 28-ին բանակ զորակոչված 19-ամյա ժամկետային զինծառայող Արմեն Սարգսի Հարությունյանը: Հայաստանի Պաշտպանության նախարարության քննչական ծառայությունը հաստատում է, որ Հադրութի շրջանի զորամասերից մեկում ականի պայթյունից զինծառայող է մահացել: ՊՆ Քննչական ծառայության լրատվության հետ կապերի պատասխանատու Մերի Սարգսյանը Panorama.am-ի թղթակցին տեղեկացրել է, որ ուսումնական պարապմունքի ժամանակ ականներից մեկը հողի մեջ տեղադրելիս պայթել է, որի հետևանքով շարքային Արմեն Սարգսի Հարությունյանը մահացել է: Նրա տեղեկացմամբ, փաստի առթիվ ՀՀ ՊՆ քննչական ծառայության 2-րդ կայազորային քննչական բաժնում հարուցվել է քրեական գործ ՀՀ Քրեական օրենսգքրի 376-րդ հոդվածի 2-ր մասի հատկանիշներով՝ «անփույթ վերաբերմունք ծառայության նկատմամբ, որը առաջացրել է անզգուշությամբ ծանր հետևանքներ»:[57]

Զինվորի մահը հաստատող բժշկական փաստաթղթում (N 206091545818, 18.05.2012) ասվում է. «Կյանքի հետ անհամատեղելի մարմնական վնասվածքներ, դեմքի, պարանոցի, կրծքավանդակի, որովայնի զույգ վերին եւ ստորին վերջույթների համակցված ականապայթյունային վնասվածք», ստորագրված է՝ բժիշկ Մելքոնյան Հ.Ֆ.: Մահվան պատճառը, ըստ բժշկի նշման, անորոշ է:

[56] http://hra.am/hy/events/2012/06/20/accident
[57] http://www.panorama.am/am/law/2012/05/21/sold/

Ըստ հարազատների պատմածների, զինվորը մահացել է ԼՂՀ Հադրութի շրջանին հարող զորամասերից մեկում՝ ուսումնական վարժանքի ժամանակ, երբ վարժություններ են կատարել նռնակներով.«Վարժական նռնակների արկղում բոլոր վարժական՝ ոչ վտանգավոր, նռնակների հետ մեկական մարտական նռնակ է եղել, իսկ զինվորները չեն իմացել, եւ Արմենը, փաստորեն զոհվել է այդ նռնակի պայթյունից»:

Մահվան մասին որեւէ պաշտոնական տեղեկություն դեռ չի տարածվել նույնիսկ դեպքը տեղի ունենալուց 3 օր հետո:[58]

[58] http://www.asparez.am/news-hy/hadrut-zinvo/#more-9821
http://www.panorama.am/am/law/2012/05/21/sold/